ԱԲՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

ՀԱՅՈՑ ՀՕՏԱՆ

Ս-39

ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆ

ՍԵՂՈՒԹՎԱԾ է 1991 Թ.

ԱՌՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ա 6416
2225

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1939

Համառոտագրություն Լենինականում
1939 թ. մայիսի 21-ին կատարված զեկուցման

Рубен Зарьян
ЖИЗНЬ АВОВЬЯНА
Гиз. Арм. ССР, Ереван

Գրողների ճակատագիրը տարբեր է լինում. կան գրողներ, որոնց մատին ժամանակակիցները խոսում են զգեվորված, հափշտակված, բայց հենց որ անցնում է մի սերունդ, հետզհետե մոռացվում են։ Բայց կան և այնպիսի գրողներ, որոնց չի հաջողվում կենդանության որով տեսնել, վայ՛լել իրենց վաստակի պտուղը, փառքը։ Մեծ մասամբ նրանց գեմ կռվում են, հետապնդում, հալածում, նույնիսկ թունավորում։ Բայց հենց որ մեռնում են, փառքը սովոր դատած հետևում է նրանց։ Այդպիսի գրողներին մատների վրա կարելի յե հաշվել։ Դրանք յեզակի յեն, շատ քիչ։ Այդ գրողներն են ստեղծում գրականության պատմությունը։ Նրանց անունով է բացվում գրականության պատմության նոր գլուխը։ Այդ գրողները միշտ ակիզբն են ուրիշի շարունակության, այսինքն նրանք են ուղղություն ստեղծում, վոճ կերտում, ունե-

նում աշակերտներ, հետևողներ։ Ժամանակի լուսավոր գաղափարներն արտահայտելը՝ նրանց արբազան գործն է։ Հումանիզմը՝ նրանց եյությունը։ Անմահություն—ահա այն պարգևը, որ տալիս է նրանց ժամանակը։

Այդպիսիներից է և Յաչատուր Աբովյանը, հայ նոր գրականության անմահ նախագլուխը։ Նա մի ովկիանոս է, որի մեջ թափվել է հազար ու մի գետ։ Պատմականորեն նրան վիճակվեց հարթելու այն դժվարին առապարը, որով յերևնական, քառանական թ. թ. հայ հասարակական մտքի լավագույնն ու լուսավորն ուներն՝ նա քայլեց դեպի մեր գրական-մասավորական կյանքի հախուռն վերածնությունը։ Աբովյանը լուսավորական շարժման առաջին ջահակիրներից է։ Ինչպես ամենուրեք, այնպես ել մեզ մոտ, լուսավորիչը մի կենդանի հանրագիտարան է յեղել։ Մանկավարժ, ազգագրագետ, լեզվաբան, պատմաբան, թարգմանիչ, Գոլկլորիստ, տուրիստ և վերջապես, գրող՝ բառիս խորագույն իմաստով։ Նա հիշեցնում է իտալական վերածնության գործիչներին։

Գոռշյանն իրավացի յեր։ Աբովյանը ժամանակից շուտ եր ծնվել։ Եվ իրավ. հեռավոր տարիների մշուշից նա մեզ ներկայանում է որպես մի առասպելական անձնավորություն, որ իր քնքուշ արտի ամեն մի

կարկը գոհ ընթաց ժողովրդին, միայնակ հանդուգն պատերազմի յելավ խավարի և պատերազմի, յեկեղեցու ու կղերի դեմ։ Այն, Աբովյանը միայնակ եր։ Այդ նոր ազողբերդությունն եր։ Նա մի լուսո ճառագայթ եր զխավարի թագավորության մեջ։ Նա իր լուսով մի պահ լոցավոտից մռայլ, անփարատ խավարը, և անփական լոցից էլ վոդջակեր յեղավ։

Դառնանք դեպի պատմությունը, դեպի այն ժամանակները, յերբ ապրել ու գործել ե Աբովյանը։ Թերթենք նրա կյանքի տարեգրությունն եջ առ եջ։

Ցերբ է ծնվել Խաչատուր Աբովյանը, ըստուրդ հայտնի չեն։ Ինքը, Աբովյանն էլ չի իմացել իր ծննդյան ճիշտ թիվը։ Հիշողությամբ նա թողել է մի քանի տարբեր թվականներ։ Հավանական թիվը պետք է համարել 1809-ը։ Ծնվել է Քանաքեռում, հարուստ, նշանավոր և ամեն կողմից հարգված հարկի տակ։ Աբովյանի հեռավոր նախնիները յեղել են իշխաններ։ Նեղվելով լեռնցիների ապստամբություններից՝ Աբովյանի ապուպապը՝ Ապովը թողնում է Լաղիզտանը, գալիս է Հայաստան։

Ահա այս Ապովից էլ սերում է Աբովյանների տոհմը։

Ապովի վորդին կոչվում էր Վիրապ, նրա վորդին՝ դարձյալ Ապով։ Վերջին Ապովը յերկու զավակ է ունենում, մեկը Ավետիք, մյուսը՝ Հարությունն։ Վերջինն Աբովյանի հայրն է։ Ապովի մահից շատ տարիներ հետո էլ նրա անունը պատկառանքով յեյին հիշում նրա ժամանակակիցները։ «Հարիր տարի կելի, վոր

լուսահոգի Ապովը մեռել ա, էլի նրա վոդորմին հա կա, հա կա։ Աբովյանն ասում է, վոր իր մանկության որերին թուրք ու հայ նրա գերեզմանին էլին որթում ուռում։ Ապովի նահապետական առաքինությունները՝ հյուրասիրությունն ու առատաձեռնությունը հայտնի էլին։ Ապովն իր ձեռովը Երևանից Թիֆլիզ տանող ճանապարհի վրա մի մեծ այգի էր գցել, վոր ճանց կենողը գա, նրա բարությունը վայելի։ Այդու բոլոր պտուղները ոտարներին ու ճանապարհորդներին էր։ Միշտ նրա դուռը բաց էր, վոր ով վորչափ ուզում է՝ ուտի, տանի։ Հազարավոր մարդ էր մտնում ու դուրս գալիս։ Բացի այն՝ վոր տանում էլին, այլև քթոցների մեջ լցնում էլին ու դնում ճանապարհի վրա, վորպեսզի մի վորևե ոտարական, վոր դուցե բոլորովին տեղեկություն չունի այդուց և գալիս անցնում է, ուտի ու վերցնի այնտեղից, վորքան կարող է։ Ինչպես վոր այդին, այնպես էլ տունն էր։ Շատ քիչ կղատահեր, վոր այդ ճանապարհով մեկին անցներ ու չմտներ նրա տունը։ Ապովի համբավը շատ հեռուներն էր տարածվել։ Իսկ ճամփի վրի մեծ իքու անունը—Հնդոտան ա հասել,—ասում է Աբովյանը։

Աբովյանի հայրը, Հարությունն այլևս իր նախնիների գիրքն ու կարողությունը չու-

ներ։ Բայց նա էլ պակաս անվանի մարդ չէր։ Նրա տունը Փանաքեռի պատվավոր հարկերից մեկն էր։

Նրան շատ լավ ճանաչում էին կաթողիկոսը, Էջմիածնի միաբանները, Երևանի սարդարը, պարսիկ մելիքները, հայ վաճառականները։ Նա սիրելի հյուր էր ինչպես Էջմիածնում, այնպես էլ Երևանում, քաղաքի անվանի մարդկանց ու մեծամեծների տանը։

Հոր հետ մի առանձին սիրով և կապված յեղել վորդին, Խաչատուրը։ Չնչելով գրեթե վոչ մի տեղ մորը, Աբովյանն իր հորը նվիրել է բանաստեղծություններ, նրան դուրս է բերել իր գրվածքների մեջ։ Դա մի հաղթանդամ գյուղացի յեր, անվախ սրտի տեր, զարմանալի քաջ, խստաբարո, բայց բարի, ընտանիքը սիրող։ Աշխատանքից հետո, յերեկոները, ձմրան գիշերներին՝ տանը, ոջախի շուրջը, ամառային օրերին՝ դուրսը, աստղազարդ յերկնքի տակ, իր շուրջը հավաքած վոգջ գերդաստանը, Հարությունը խոսում էր, զրուցում աշխարհի բարու և չարի մասին։ Պարզամիտ նահապետական գյուղացին աշխատում էր իր յերեխաներին մարդասիրական զգացմունքներ ներշնչել։ Նա համոզում էր հարգել մեծերին, պահել ընտանիքի պատիվը, կանգնել պաշտպան թուլին, ոգնություն հասնել ընկածին։ Հոր զրուցներն ու

խրատներն Աբովյանի վրա մեծ ազդեցություն եղին թողնում։

Գակաս ազդեցություն չեն ունեցել Աբովյանի վրա նահապետական գյուղի լի ու առատ կյանքը, հայկական հյուրասիրությունը, ժողովրդական սոնները—բարեկենդանն իր խրնդությունների, գյուղական ջահելների խաղը, պարը, յերգը, ջիրիդը։

Աբովյանի մանկական հուշերի վոսկեշողթայի մեջ առանձին տեղ ունի Քանաքեռի բնությունը։ Մանուկ հասակից բնությանը սիրահարված եր նա։ Իր նամակների ու բանաստեղծությունների մեջ անդադար հիշում է Քանաքեռը։ տեղը բարձր, ջուրը քաղցր, ոդը գեղեցիկ, չորս կողմը բաղերով լի։ Շատ հաճախ չարանձի ու աշխույժ մանուկը, թողած խաղը, ընկերներին, բարձրանում եր կատարը, նստում ժամերով, ոքանչանում բընության մեջ։ Նա հմայված դիտում եր անձրևից հետո յերկնքի անհուն կապույտի վրա յերիզվող չքնաղ ծիածանը, Արարատյան գեղատեսիլ դաշտավայրը, նրա վրա վեհությամբ բազմած փոքր ու մեծ Արարատները։ Զգայուն և շուտ ազդվող մանկան հոգու վրա բնությունը գրեց իր անջնջելի կնիքը։ Բնության սերն ու պաշտամունքը շնչում են նրա յուրաքանչյուր տողի մեջ։

Անկարելի յե, վոր այդպիսի ուշիմ, խելոք

և զգայուն մանկան հոգու վրա հասարակական շրջապատն իր ազդեցությունը չունենար։ Մի գերմանացի ճանապարհորդ իր ուղեգրությունների մեջ Աբովյանի բերանից պատմում է այն վայրագ բռնությունները, որ խանական Պարսկաստանի տիրապետության որով գոյություն ունեին Թանաքեռում և ընդհանրապես Հայաստանում։ Ամեն ամառ հարկահավաքը գալիս էր գյուղ և մնում յերեքից-չորս ամիս։ Այդ ամիսներին նա յեր գյուղի իշխանավորը։ Նրա ցանկությունը կարգադրություն էր, խոսքը՝ անվերապահ հրաման։ Բոլորը հլու-հնազանդ յենթարկվում եյին նրան։ Նրա ծառան շրջում էր տնից-տուն և յեթե գյուղացիները գանգատվում եյին նրա պահանջը կատարելու, խուժում էր խրճիթ, ճիպոտահար անում բոլորին, տան ունեցվածքը ջարդում, յերբեմն էլ այրում։

Թադիազյանն էլ ավել է այդ բռնությունների նկարագիրը։ Յերբ գյուղերում բերք չեր լինում,—ասում է նա,—Յերևանի բդեշխը, Հյուսեյին խանը, ինքը վերագրում էր ժողովրդին։ Նա գործ էր դնում նրանց վրա բռնություն և անպատմելի խժդժություն, խլում, հափշտակում էր ինչ որ տներում գտնում էր, կահ-կարասի, և յերբ այդ էլ չեր լինում, խլում էր նրանց տունն ու տեղը, վորդիներին։ «Աղջիկն ասեա՝ քաշում էլին,

ողնե տես՝ տանում, շատ անգամ թուրքաց-նում, հավատից հանում, շատ անգամ ել գը-լուխը կտրում, երում, նահատակում, պատ-մում ե Աբովյանը։

Ահա այս բոլորի վկան ե յեղել Աբովյանը։ Կարող եր այս բոլորը չխոովել նրա մանկա-կան հոգին։ Իհարկե, վոչ։ Այդ բոլոր կեղե-քումները ծանր, ճնշող տպավորություն են թողել նրա վրա։ Այդ բոլորն Աբովյանը պատ-կերագրել ե «Վերք Հայաստանի» վեպի մեջ։ Պարզ ե, վոր տառնամյա մանուկն այն ժա-մանակ շատ լուրջ մտքերի հանգել չեր կա-րող։ Բայց այդ չի նշանակում, վոր զգայուն յերեխան կարող եր անտարբեր մնալ դեպի իր շրջապատը։ Նա մանկուց թշնամությամբ եր լցված դեպի հարկահավաքները, մարդիկ՝ վո-րոնք տեր եյին կանգնում ուրիշի վատակին։ Նրա մշուշապատ մտածումները կարող եյին դեռ այն ժամանակ վճիտանալ։ Չե՞ վոր գյու-ղացիները հավաքվում եյին, ասում, խոսում, դժգոհում անիրավ կարգերից, մարդավայել կյանք յերազում։ Աչքաբաց մանուկը, ան-շուշտ լսել ե գյուղացիների խոսքն ու զրույցը։

* * *

Հարությունը մի առանձին մտահոգություն ուներ վորդու կրթության և ապագայի վրա։ Հենց վոր Աբովյանը բոլորեց իր տասը տա-բին, հայրը նրան տարավ Եջմիածին։

Աբովյանն նշմարածնում մեաց մոտ հինգ տարի։ Թե ինչ կյանք է ունեցել նա այդ տարիներին, շատ քիչ է հայտնի։

Աբովյանը գյուղում, բնության ծոցում ծընված ու մեծացած մանուկ էր, վոր ընկավ նշմարածին։ Նա իր հետ տարավ գեղջկական հոգու պարզություն և մաքրություն։ Խաղը, խնդությունը, անհոգ զվարճանքը, մեծերի գուրգուրանքը նրա սովորական առորյան եր գյուղում։ Նոր շրջապատը, նշմարածնի մթին խցերի վանական կյանքը, գյուղականի հակապատկերն եր։ Գուրգուրանքի փոխարեն՝ դաժանություն, խաղի տեղ՝ ծեծ ու պատիժ, ազատության փոխարեն՝ տրկական հնազանդություն։ Ինչպես մյուս մոնթերը, այնպես էլ Աբովյանը, կանուխ առավոտով, հավախոսից անմիջապես հետո, պետք է արթուն լիներ։ Ով դժվարանար ժամանակին վեր կենալ, բարակ ճիպոտի հարվածներն իջնում էին նրա վոտներին։ Առավոտյան ժամերգությունը տևում եր անտանելի յերկար, յերեք-չորս ժամ։ Մատաղահաս յերեխաները ծունկի յեկած մրմնջում էին աստվածախոս աղոթքներ։ Իսկ հետո էլ մթին ու անհրապույր խցերից մեկում, խմբված վորևե ծերունի վարդապետի շուրջ, մանուկները սովորում էին ազգոս և շարական։

Աբովյանը չդիմացավ վանքի դաժանու-

թյուններին։ Մի քանի անգամ փախստական փորձեր արեց։ Բայց անհաջող։ Փախչողների հետ շատ խիստ եյին վարվում։ Փախչողներին պատժում եյին ամենադաժան ձևով, ա՛խ ինքն՝ կախում եյին մի բարձր տեղից և անողորմ հարվածներ թափում նրա վոտքերի յեղունգներին, մինչև անհնարագրելի ցավերն ուշաթափ կանելին ամենավերջ յերեխային։

Գերմանացի բանաստեղծ Լոդենշլեգերը, վոր մոտիկից ծանոթ եր Աբովյանին, իր ուղեգրություններին մեջ հիշում է, վոր Աբովյանն եշմիածնի մատին ասե և իրեն թե կարծեք իր գլխին սառը ջուր են մաղում, յերբ ինքը վոտք և դնում հին պարիսպներ իր ներս, այնքան անտանելի յեն այն տպավորությունները, վոր ինքն ստացել է իր պատանեկության հասակում և վորոնք յերբեք այլևս չեն չքանում իր հիշողությունից։

Ուրեմն, վորքանն ծանր և յեղել պատանու համար այդ հինգ տարվա կյանքը։ Գրեթե յերկու տասնամյակ հետո եյ, վանք վոտք դնելիս, մոտյլ հիշողությունները ծանր մըղձավանջի նման իջնում եյին նրա վրա։

Լոդենշլեգերի ասելով Աբովյանը մեծացել է լացի, ողբի և պահքի մեջ, մի վայրենի, ամեն ազնիվ բանի համար թթացած, անբնական հեշտության մեջ ապականված մի շրջապատում, ավելի ոգուտ չունենալով, քան այն,

վոր նա մի փոքր գրաքար սովորեց Եջմիածնում։

Վանքում Աբովյանի միակ մխիթարությունն Անտոն յեպիսկոպոսն էր։ Աբովյանի խնամքը նրան էր հանձնված։ Աբովյանն այնքան էր սիրում իր խնամակալին, վոր յերբեմն էլ նրա ազգանունով էր ստորագրում — Մաչատուր Անտոնյան։ Աբովյանի ձեռագրերի մեջ պահպանվել է Անտոն յեպիսկոպոսին նվիրված մի չափածո գովեստ*։ Պատանի բանաստեղծն իր թոթով լեզվով շնորհակալ է լինում ուսուցչին, վոր աշակերտին ներշընչել է սեր դեպի գիրքը։ Նրա ձեռքի տակ սովորելով գրել-կարդալ՝ Աբովյանը տատնհինգամյա հասակում ընթերցում է հայրենասիրական գրքեր։ Նա ծանոթանում է Ղուկաս Վանանդեցու, Սիմեոն կաթողիկոսի, Մխիթար Աբրայի կյանքին։ Կարդացած գրքերը վառում են պատանու մեջ հայրենիքի սերը և կոչում նրան ծառայելու ճնշված ժողովրդին, յերկրին։ «Փափագէի և ես իմ Ովսանն կարողութեամբ պիտանի լինել ազգին իմում սիրելւոյն,—գրում է Աբովյանն այդ գրքերը կարդալուց հետո։ Այդ գրքերն ոգնեցին նրան ճանաչելու իր յերկրի անցյալը, խորամուխ

*) Անտոնի մահից հետո, ի նշան յերախտագիտության, Աբովյանը գերեզմանաքար է դրել տալիս նրա շիրմին։

լինելու հայոց պատմության մեջ։ Նա իմացավ, որ հայ ժողովուրդն իր սկիզբն առնում է հինավուրց ժամանակներից, որ յեղել է ժամանակ, յերբ հայերը վոտք են գցել աշխարհի հզոր պետություններին հետ։ Կարող եր նա չնկատել, որ նույն այդ ժողովուրդն այժմ տառապագին հեծծում է ոտար լծի տակ, որ գերի յե, ստրուկ իր սեփական հողի վրա։ Ի հարկե, վոչ։ Գյուղում տեսածն ու լսածը՝ կարդացած գրքերի ազդեցության տակ՝ այժմ կարող եյին շատ վորոշ խորհրդածություններին առարկա դառնալ։ Անկարելի յե, որ պատանի հայրենասերն արդեն չմտմտար այն ուղիների մասին, որ հայ ժողովրդին կարող եյին ազատություն բերել։ Վերջնք եյին այդ ուղիները, Ավ վյանը չգիտեր։ Վոչ վանական մի գավառը, վոչ էլ կարդացած գրքերն ունակ չեյին ցույց տալու նրա վորոնածը։ Ցավ հայրենասիրությամբ տոգորված տառնհինգամյա պատանու վառվռուն միտքն ու հոգին՝ հայրենի յերկիրն ազատ ու յերջանիկ տեսնելու անհուն փափագով՝ դեռ այն ժամանակ իրենց առաջին ճախրանքը կատարեցին դեպի յերազանքների յերանելի աշխարհը։

* * *

Հինգ տարի Եշմիածնում մնալուց հետո, Աբովյանն անցնում է Հաղպատ, այնտեղից

2025 A 64/16

էլ՝ Թիֆլիս։ Նա գնում էր ուսման մեջ կատարելագործվելու։ Թիֆլիսն իր ուրույն կյանքով մի նոր աշխարհ էր Աբովյանի համար։ Գավառացի պատանին ընկել էր քիչ թե շատ մեծ, շարժուն քաղաք։ Կյանքը Թիֆլիսում մի առանձին ու յուրատեսակ ժպիտ ուներ։ Այդ չէր կարող վրիպել Աբովյանի աչքից։ Ինչ վոր քիչ առաջ էր միայն նա ազատվել վանքի մռայլ խցերից։ Սրտաբաց, զվարթ քաղաքը, վանքի մռայլ, միալար կյանքի հակապատկերն էր։ Հենց վոր իրիկնապահը վրա չէր հասնում, փողոցները լցվում էին յերգի և խնդության ձայներով։ Զուռնա, նաղարա, դհոլ, մի խոսքով՝ պարից, յերգից, ծափ ու ծիծաղից թնդում էր քաղաքը։ Մի առանձին աքանչելիք էր, յերբ լուսնակ գիշերով քաղաքի փողոցներում սկսում էր ծորել Սայաթ-Նովայի յերգերի թախիծը։ Ցերգիչներն ու նվագողները անցնում էին փողոցից-փողոց, թաղից-թաղ։ Ժողովուրդը՝ հավաքված դարպասների մոտ, պատշգամբների ու կտուրների վրա՝ ուրախանում էր։ Ճիշտ և նկատել բանաստեղծը, թե Թիֆլիս առաջին անգամ վոտք դնողը այն տպավորությունն էր ստանում, վոր ինքն ընկել է մի մեծ և ուրախ հարսանքատուն, ուր հրավիրված էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը՝ քեֆ անելու։

Թիֆլիսը քիչ թե շատ լուրջ ուսումնական

հատուցություններ չուներ այն ժամանակ։ Մի պատմաբանի տեսությամբ ամբողջ քաղաքում միայն Հայոց հոչակված էր ժամկոչ Ցեղիազար Գալուստյանը։ Նա մի դուքանում, գնանի վրա պարապում էր յերեխաներին հետ, նրանց պահելով Գալախկայի մշտական ահ ու սարսափի տակ։ Անա այդ ժամանակներում Շուշուց Թիֆլիս և գալիս Պողոս վարդապետ Ղարաբաղցին։ Նա նշանավոր հայկաբանի համբավ էր վայելում։ Վերջինս յեռանդուն գործունեություն շրջանում ժամկոչ Ցեղիազարն տվիրի մեջ և Ճառում։ Արովյանը, Սունդուկյանը և մի խումբ այլ պատանիներ Պողոս վարդապետի ձեռքի տակ մի տարուց չափ ուսում են տանում։ Նա իր աշակերտների հետ պարապում էր Տափիթաղի վանքում, իր խցում։ Այստեղ են Գալախկայի թատրոնները։

Հետաքրքրասեր ու վառվռուն պատանիները «վարժապետական գավազանից» ահի տակ, որ ու գիշեր գլուխ էլին ջարդում Զամչյանի քերականության, Ագոնց Ստեփանոսի ճարտասանության և Թեսալիոսի վրա։ «Գիտոր յն ասել, վոր այդ վարժապետը,—գրում է Նալբանդը Պողոս վարդապետի մասին,—ավելի ծեծ, քան թե ուսում և ավել յուր աշակերտներին։

1824-ին, Ներսես արքեպիսկոպոսի ջանքե-

թով, Թիֆլիսում բացվեց մի հոգևոր դպրոց։ Դպրոցը կոչվեց հիմնադրի՝ Ներսեսի անունով։ Նոր բացված դպրոցի տեսուչ կարգվեց Մոսկվայից հրավիրված Հարությունն Ալամդարյանը։ Ներսիսյան դպրոցի բացումը մի կատարյալ հեղաշրջում եր հայ յերեխաների կրթության գործում։ Առում են, վոր դասավանդությունը յեղել և վայրենիորեն, բացի Ալամդարյանից մի ուրիշ կարգին ուսուցիչ չի յեղել։ Այդ բոլորով հանդերձ, դա հայ իրականության մեջ առաջին, քառի ճշգրիտ մտքով աշխարհիկ դպրոցն եր։ Բացի ռուսերեն, ֆրանսերեն և պարսկերեն լեզուներից, հայ պատանին Ներսիսյան դպրոցում ծանոթանում եր ընդհանուր և հայոց պատմությանը, քրիստոնեական վարդապետությանը, անցնում թվաբանություն, աշխարհագրություն, նկարչություն, վարժվում ճարտասանության և տրամաբանության մեջ։ Գողոս վարդապետի վարժատունը Ներսիսյանի, մի տեսակ, նախապատրաստականն եր։ Ցերբ բացվեց Ներսիսյանը, Գողոս վարդապետն իր աշակերտներով տեղափոխվեց նոր կրթարանը։ Տեղափոխվեց նաև Աբովյանը։ Աբովյանի ծանոթությունն Ալամդարյանի հետ վճռական նշանակություն ունեցավ։

Աբովյանի եջմիածնական մտորումների մշջուշը Թիֆլիսում սկսեց ցրվել։ Եջմիածնում

Հարություն Ալամդարյան

պատանու մեջ արթնացավ սեր դեպի գիրքն ու ընթերցանությունը։ Կարդացած գրքերը նրա մեջ վառեցին հայրենասիրության բարձր զգացումը։ Այդ բոլորն իրենց զաղափարական հունը գտան մի այն թիֆլիսում։ Այդ հարցում շատ մեծ եր Ալամդարյանի դերը։ Մեծ, կարելի յե ասել՝ անջնջելի ազդեցություն ե թողել նա իր աշակերտների մտքի և հոգու վրա։ Տարիներ հետո Արովյանն Ալամդարյանի ազանության լուրն առնելով, իր հիշատակարանի մեջ գրեց, թե նրա մահով անթիվ հայ պատանիներ ու յերիտասարդներ կորցրին իրենց ապագան։

Ալամդարյանը ռուսական որիենտացիայի մարդ եր։ Ռուսական պետականության մեջ եր նա տեսնում Հայաստանի փրկությունը։ Հայաստանի ապագա բախտը, կուլտուրական վերածնությունը նա կապում եր Յեկատերինե Ռուսաստանի կողմից նվաճելու հետ։ Թուրքիայի մեծ մասն արդեն նվաճված եր։ Իսկ Հայաստանը շարունակում եր մնալ Պարսկաստանի ձեռին։ Այդ հարցերի մասին նա, անշուշտ, խոսում, զրուցում եր իր աշակերտների հետ։ Շատ բան այժմ հայտնի չե այն կապի մասին, որ այդ տարիներին ունեցել են աշակերտը և ուսուցիչը, Արովյանն ու Ալամդարյանը։ Լինելով ամենահասակավորը և լքված աշակերտների մեջ՝ անկարելի յե, որ

Աբովյանը դասերից դուրս, դպրոցական պաշտոնական ժամերից հետո զրույցներ ունեցած չլինի Ալամդարյանի հետ։ Ուսուցչի զրույցներն առատ սնունդ տալով Աբովյանի ծով յերևակայությանը՝ պետք է վոր դեռ այն ժամանակներից պատանուն ոգեշնչին լրջորեն խորհել իր յերկրի բախտի վրա։ Չի վոր ինքը մանկուց վկա յեր յեղել, տեսել էր հայրենիքի տառապանքը։ Վորդեգրվելով իր ուսուցչի քաղաքական ծրագրերին՝ Աբովյանը դառած էր համարում իր վորոնմունքը։ Նա էլ, Ալամդարյանի նման, Հայաստանի ազատագրության միակ խարիսխը ռուսական պետականությունն է համարում։

* * *

Աբովյանը Ներսիսյան դպրոցի առաջին շրջանավարտներից յեղավ։ Ներսիսյան դպրոցն Աբովյանի մեջ վառել էր մի անսահման սեր գեպի գիտությունը, ըմբռնել նրա յեռանդն ու ձգտումը գեպի լուսավորությունը։ Ավարտական վկայական ստանալով՝ Աբովյանն անցավ Հռոմ, ըստ յերևույթին, Եկեղեցի կաթողիկոսից Վենետիկ ուսման գնալու թույլտվություն ստանալու համար։ Գնալ Վենետիկ, թաղվել գրքերի մեջ, տիվ ու գիշեր կքվել ձեռագրերի վրա,—այս էր նրա յերազը։ Բայց այդ միայն յերազանք էր։ Անտակնկալ է

պատերազմը պարսիկների և ռուսների միջև խանգարեց նրան։

Աբովյանը վկա լեղավ պատերազմական աղետին։ Հայկական գյուղերը մատնվում էին հրի ու սրի։ Ժողովուրդն սկսում է գաղթել, հատատավել ուսի հոգի վրա։ Հայ գյուղացին վողբաձայն լացով հրաժեշտ է տալիս իր հողին, ջրին։ Ժողովուրդը սար ու ձոր է լցվել, իրար վրա թափվել։ «Լացի, սքի ձենը յերկինքն էր հասել, լողի, տեսնողի սիրտը երում, փոթոթումն, — պատմում է Աբովյանը «Վերքիս» մեջ։

Լինելով պատերազմի մեջ, միշտ գերի ընկնելու վտանգի տակ, տեսնելով հայ գյուղացու անպատմելի զրկանքները, Աբովյանը մի անգամ ընդմիշտ համոզվեց Ալամգարյանի ներշնչած քաղաքական ձգտումների ճշմարտության մեջ։ Նա թեև պատանի, բայց արդեն ռուսական որիենտացիայի համոզված ներկայացուցիչներից էր։

Պատերազմը տակավին չավարտված՝ Աբովյանը մեկնում է Նշմիածին։ Յերևանում նա գրում է մի վոտանավոր, վորով փորձում է տալ իր հայրենիքի ապատագրության ծրագիրը։ Այդ բանաստեղծությամբ նա հանդես է գալիս իբրև կազմակերպված քաղաքացի։ Հեռաքրքրական է մի հանգամանք։ Աբովյանը դեռ Թիֆլիս չմեկնած, 1824-ին, դարբ-

ձյալ Ցերեանում, գրեց իր առաջին վոտանավորներից մեկը, վորտեղ հայրենիքի տխրագին վիճակից զառնացած՝ վոգեկոչում և հայրենի անցյալի անցած-գնացած փառքը։ Փըրկության և հույսի վոչ մի շող չտեսնելով ավերակ յերկրի համար, նա զառնում է դեպի հայրենի գեղեցը և խնդրում, վոր իր աբցունքն ել խառնեն իրենց հոսանքին։ Այս բանաստեղծությունը գրելուց հետո անցել եր մի քանի տարի։ Դեմքեր ու դեպքեր եյին փոխվել Աբովյանի կյանքում։ Պատանի հեղինակը վերադարձել եր հայրենիք շատ վորոշ քաղաքական ձգտումներով ու համոզումներով։ Նոր գրվածքի մեջ բանաստեղծն այն միտքն և հայտնում, վոր հայ ժողովուրդն իր դալիք կյանքի բախտը, հանգիստն ու յերջանկությունը կգտնի միայն ռուսական պետականության հովանու տակ։ Այդ ցույց և տալիս, վոր Աբովյանն այդ տարիներին միանգամայն լրջախոհ հայացք ուներ դեպի հասարակական-քաղաքական կյանքը։ Այդ բանաստեղծությունը յեղավ Աբովյանի քաղաքական հասունության վկայագիրը։

* * *

Աբովյանն ենթիածին հասավ այն պահին, յերբ վոչ միայն մի անհանգիստ տագնապի մեջ եր։ Քաղաքական դեպքերը

շատ արագ հաջողում էին իրար։ Կաթողիկոսը չկար։ Բոլորը սպառուժների մեջ էին։ Ներսես Աշտարակեցին, որ այդ ժամանակ Վրաստանի թեմի առաջնորդն էր և Ռուսաստանի հաղթանակի համար հայերի մեջ հող պատրաստողներից մեկը, միաբանության մեջ համախոհներ ուներ և, ի հարկի, նաև հակառակորդներ։ Պատանի Աբովյանն իր համակրություններով հակված էր դեպի Ներսեսյանները։ Վերջիններն ընդմիջում հող էին պատրաստում Ներսեսի համար, նրա գալստյան հետ հույսեր և ակնկալություններ կապում։

1827-ի գարնանը ռուսաց զորքերը Ցերեվան մտան։ Հայաստանն անցավ Ռուսաստանին։ Աբովյանի և նրա համախոհների բաղձանքը կատարված էր։

1828-ին, յերբ արդեն պատերազմը վերջացել էր, յերկիրը գրեթե խաղաղել, Ցեփրեմ կաթողիկոսը վերադարձավ Եջմիածին։ Կաթողիկոսի վերադարձից հետո, Աբովյանը կարգվեց «թարգման և գրագիր Նորին վեհափառության»։ Այս պաշտոնը մեծ կշիռ ավեց Աբովյանին։ Բացի այս, նա լավ գիտեր գրաբար, ինչպես և ռուսերեն։ Զուգենալով իր յերկրորդը միաբանության մեջ, վանքի համար Աբովյանը դարձավ շատ կարևոր և գրեթե անփոխարինելի անձնավորություն։

Բոլորը նրան բախտավոր էին համարում, յերանի տալիս։ Բայց նա ինքն իրեն դժբախտ էր զգում։ Ի՞նչն էր դրա պատճառը։ Եջմիածին վերադառնալով՝ Աբովյանը թերել էր, նազարյանի խոսքով ասած, «յուր սրտի մեջ մի վառ ուսումնասիրության կրակ»։ Հիրավի, Աբովյանին այրում էր ուսում ստանալու, կրթված մարդ դառնալու զաղափարը։ Ցերազները հանգիստ չէին տալիս նրան։ Վորոգայթների անվերջանալի շարանը, դավերն իրար դեմ, կռիվները, բամբասանքները, վոր վանականների մեծ մասի հոգեկան անուղղելի էին կազմում, Աբովյանին զզվեցրել էին։ Դեռ այն ժամանակ նա մի ամբողջ գլխով բարձր էր կանգնած վանական ճահճուտից։ Նա ուզում էր հեռանալ, գնալ սովորելու։ Ընդառաջող չկար։ Անտոն յեպիսկոպոսի ջանքերն՝ իր սանին Առտարխանի Աղաբաբյան դպրոցում տեղավորելու՝ արդյունք չեյին տվել։ Իսկ Անտոնի մահից հետո այդ մասին մտածող անգամ չկար։ Ջանում էին գայթակղեցուցիչ խոսքերով հրաժարեցնել նրան իր բարձր ծրագրերից։ Հոգևորական բարձր կոչումներ էին խոստանում—վարդապետություն, յեպիսկոպոսություն։ Այդ փառքը, սակայն, պատանուն չէր հմայում։ Նա մտածում էր իր հոգեկան աշխարհի կատարելության մասին։

1828-ին Ներսես Աշտարակեցուն Բեռարաբիա ուղարկեցին։ Սա աքսորի նման մի բան էր։ Դա մի փորձ էր հեռացնելու, կղզիացնելու մեկին, վորի ազդեցությունը միաբանության և նրա գործերի վրա շատ ավելի յեր, քան նույնիսկ կաթողիկոսինը։ Ներսեսի աքսորը փչրեց նրա կուսակիցների յերազանքներն ու ապատումները։

1829-ին մի խումբ հոգևորականներ միտք են հղանում Մխիթարյան միաբանության որինակով ընկերություն հիմնել։ Նոր միաբանությունը պետք և գործեր Սևանի կղզու վրա՝ իր շուրջն համախմբելով այն ժամանակվա լուսամիտ հոգևորականներին։ Միաբանության նպատակն էր զբաղվել հայագիտությամբ, տպարան հիմնել, գրքեր հրատարակել, ձեռագրեր հավաքել, դպրոց ու գրադարան բանալ, մի խոսքով՝ լուսավորություն տարածել։ Նոր միաբանության անդամներից էր լինելու նաև Աբովյանը։ Մի վորոշ ժամանակ գաղտնի յե պահվում միաբանություն հիմնելու գաղափարը, բայց հետո, յերբ արդեն մշակված էր գործունեության ծրագիրը, հարցը հասնում է կաթողիկոսին և սինոդին ի հաստատություն։ Միաբանություն հիմնելու գաղափարն ազգային ինքնաճանաչության նախանշաններից էր։ Այդ նշանակում է, վոր լուսավորությունն ու առաջադիմությունն

արդեն ոչնչել եյին թնաձել խավարամած աշխարհի վրա։ Բայց Ցեփրեմ կաթողիկոսը, վոր Բոդենշտեդի առելով, որտանց թշնամի յեր ճշմարիտ քաղաքակրթության և գիտության, իր ուռն անտարբերությամբ գործը լռության մատնեց։ Զարմանալու պատճառ չկա։ Լուսավորության տեղ—խայտառակ կռիվները, բամբասանքները, առաջադիմության փոխարեն—քստմնելի դավեր ու վորոգայթներ,—ահա վանական միջավայրը, վոր խեղդում, վոչնչացնում եր ամեն ազնիվ ձգտում, ամեն բարձր և լուսավոր միտք։

* * *

1829-ի ամռան վերջերին, Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտն իր մի քանի ընկերներով Հայաստան յեկավ՝ Արարատի գագաթը բարձրանալու։ Պարրոտին հարկավոր եր թարգման։ Միակ և հարմար թեկնածուն Աբովյանն եր։ Բացի տեղական լեզուներից՝ հայերենից, ազրբեջաներենից և պարսկերենից, նա գիտեր նաև ռուսերեն։ Հանդիպման առաջին պահից յերիտասարդ վանականը գրավում է անվանի ճանապարհորդի ուշադրությունը։ 1831-ին Պարրոտը հրատարակեց իր նշանավոր „Reise zum Ararat"-ը, վորտեղ նա անվերջ հիշում է Աբովյանին և նրա ծառայությունները։ Դեռի գի-

տությունն ունեցած իր ծարավով, իր համեստ ձգտումներով, սակավապետությամբ և ջերմեռանդությամբ, ինչպես և իր մտքի հրատակությամբ, սրտով և կամքի կայունությամբ, Աբովյանն ամբողջապես նվաճում է Գարրոտի սերն ու համակրությունը։

Սեպտեմբերի 9-ին Գարրոտի արշավախումբը դուրս չեկավ Ծղմիածնից։ Հասնելով Սև-Ջուր, ուղևորները մի որ մնում են այստեղ, ապա մեկնում Ակոռի գյուղը, վոր լեռան ստորոտում եր գտնվում։ Նրանք տեղավորվում են ս. Հակոբի վանքում։

Հետևյալ որը Գարրոտը, դորպատյան ընկերներից մեկը, Ակոռի գյուղացիներից Սահակը, վոր շատ լավ ծանոթ եր տեղին և լեռան, և մի գինվոր՝ սկսում են վերելքը։ Նրանք փորձում են բարձրանալ արևելյան կողմից։ Վերելքը տևում է յերեք որ և ունենում է անհաջող վախճան։

Սեպտեմբերի 18-ին արշավախումբն իր յերկրորդ վերելքն և սկսում։ Այս անգամ ուղեվորների խումբն ավելի մեծ եր։ Աբովյանը թախանձում է Գարրոտին՝ իրեն էլ վերցնել։ Գարրոտն սկզբում չի համաձայնում, ասելով, վոր առանց որածայր գնվագանի և յերկաթագամ կոշիկների դժվար կլինի։ Բայց հետո, անկարող լինելով ընկճել պատանու վոգևորությունը, զիջում է։ Այս անգամ արշավա-

խումբը վերելքն սկսում և արևմտյան կողմից Դաժան սառնամանիք և լինում։ Ուղեվորները մի կերպ հասնում են Թեփ-գյոլ կոչվող վայրը և այդտեղ էլ դիշերում։ Հաջորդ որը, կանուխ առավոտից շարունակվում է վերելքը։ Մի փոքր բարձրունք էլ կտրելով՝ ուղևորները հանդիպում են ձյան ամպիսի մի բքի, վոր վերելքը շարունակելու դեպքում իրենց կյանքը վերահաս վտանգի առակ եյին դնելու։ Դիշերով ուղևորները վերադառնում են վանք և, վատ յեղանակների պատճառով, ապասում մի քանի որ։

Սեպտեմբերի 27-ին արշավախումբը վերելքի յերրորդ փորձն արավ։ Պարբուռի գորպատյան ընկերները հրաժարվեցին մասնակցել։

Դժվար ու ծանր եր յերրորդ վերելքը։ Յերկու դիշեր ուղևորները պատապարվում են մեծ քարերի արանքում, խարույկ վառում, տաքանում։ Մի քանիսը թուլացած ընկնում են հանապարհի կեսին։ Մնացածները շարունակում են վերելքը։ Հենց վոր յերևում է գագաթը, բոլորը մոռացած վերելքի անասելի տանջանքները՝ շտապում են ժամ առաջ վոտք դնել լեռան գագաթը։

Սեպտեմբերի 29-ին, որվա կեսին, վերելքի մասնակիցները, թվով վեց հոգի, վոտք դրին Արարատի կատարը։ Արշավախումբը

կես ժամ մնում է գագաթի վրա։ Ցեվ մինչև արևը կթեքվեր, Պարրոտը յերկրաբանական չափումներ էր կատարում, իսկ Աբովյանը գիտում իր առաջ բացված զմայլելի տեսարանը։

Պատանի կրոնավորն անվանի գիտնականի առաջ բացում է իր սիրտը։ Նա հայտնում է տարիներով փայփայած իր իզձը՝ գնալ սովորելու, մագլցելու գիտությյան բարձունքներով, վոր մարդու միտքն ընդլայնվի, ազնվանա հոգին, բաղձալի կատարելությյան հասնի։ Լեռան գագաթին, այդ նվիրական պահին, Պարրոտը յերդում է տալիս ազատելու նրան տղմից, տանելու հետը դեպի լույս։

Վերելքի մասնակիցները, յերբ արդեն որը յերեկոյանում էր, հրաժեշտ են տալիս գագաթին։ Նրանք գիշերում են լեռան կրծքին և մյուս որն անվտանգ հասնում վանք։

Պարրոտը մեկնեց։ Նա խոստացավ միջնորդել ուր և ում հարկն է և անպայման ձեռք բերել Աբովյանին Դորպատ՝ ուսման ուղարկելու հարկավոր իրավունքը։ Պարրոտից հետո՝ Աբովյանը թաղվեց վարդագույն յերազանքների մեջ։ Նա զուրգուրում էր իր ապագա կյանքի գալուստը։ Հոկտեմբերի 29-ին նա գիմում է Ներկայացնում սինոդին, վորպեսզի թույլ տան իրեն Դորպատ մեկնել՝ բարձրագույն ուսում ստանալու։ Բամբասանքն ու զրպարտությունը բարձրացնում են



Ֆրիդրիխ Պարբոտ

իրենց տուրը։ Կաթողիկոսից սկսած մինչև վերջին վանականն սկսում են հորդորել Աբովյանին հրաժարվելու Պարրոտին տված խոսքից։ Հլու-հնազանդ մնալ Եջմիածնին և, ինչպես առաջ, այնպես էլ այսուհետև, վանքի կամարների տակ, ծունկի չոկած, աղոթքներ մրմնջալ—այս էր նրանց պահանջը։

Աբովյանը համառ և անդրդվելի մնաց։ Բայց նրան միշտ չէր հաջողվում լուռ արհամարհությամբ բարձր կանգնել այդ դառնավայրից, չնչին ու խեղճ մարդկանց հառաջակությունից, վոր ճանճի նման ցած իր ձկում վեր, դեպի վեր սավառնող հոգին։

Անպակաս եյին ծաղրը, հալածանքը։ Դա ուներ իր խորունկ պատճառները։ Պատճառներից մինն էլ Արարատի գագաթը բարձրանալն էր։ Այն ժամանակ բերնե-բերան էր անցնում մի հին առասպել։ Իբր թե սուրբ Հակոբը փորձում է բարձրանալ լեռան գլուխը՝ իր աչքով տեսնելու Նոյան տապանը։ Մի քիչ բարձրացած՝ սաստիկ հոգնում է, ուժասպառ ընկնում։ Լացակում աղոթում է։ Արտասուքը դառնում է մի աղբյուր։ Հանգիստ առնելով՝ ծերունին շարունակում է վերելքը դժվարին առապարներով։ Գիշեր է մնում, վոր հասնի լեռան կատարը, բայց այլևս կորցրած ամեն ուժ և կարողություն, ուժասպառ

ծերունին ընկնում և խոր քնի մեջ։ Ցերա-
գում հայտնվում և մի հրեշտակ և ասում.

— Հակոբ, Հակոբ, տերը լռեց քո աղերսը.
ահա քեզ մոտ և տապանի մի մասը, վերցրու
և գնա։ Եվ իզուր մի տքնիր տեսնելու այն,
ինչ ասածը կամքով մարդուց անտես պիտի
մնա։

Եվ մի պատանի, վորին ըստ յերևույթին,
շատ լավ հայտնի յեր այդ առասպելը, խիզա-
խել եր բարձրանալ լեռան գագաթը, վորք
դնել նվիրական սրբավայրը։ Առավածավախ
կրոնավորների համար այդ մի անսովոր և
հանդուգն քայլ եր։ Այդպիսին, նրանց կար-
ծիքով, անպատիժ չպետք է մնար։

Եջմիածնի մթաքանության մեջ բոլորը յե-
բևում զարձրին Արովյանից։ «... Ուր վոր միայն
գնում եմ, վիշտը և խռովությունը ամենի
նման գալիս են իմ յետևից»,— զանգատվում
և հոգեկան խռովքի մեջ ընկած Արովյանը։
Նրա միակ մխիթարությունն ու անբաժան
ընկերը ապագայի հույսն եր, Դորպատ ընկնե-
լու փափագը։

Հակառակի պես Գարրոտից վոչ մի լուր
չկար։ Վանքում փսփսոց անցավ. յեվրոպացին
խաբել և հայ պատանուն։ Հուսահատության
հասած Արովյանը մի խնդրագիր ուղարկեց
կայսեր։ Իր խնդրագրի մեջ Արովյանն ասում
է, վոր դեռ շատ հին ժամանակներում ազգ-

գուտ նպատակներով մեր նախնիները պատանիներին ուղարկում էին Աթենք՝ գիտություն, լուսավորություն ձեռք բերելու։ Այժմ ասում է Աբովյանը, յերբ մեր այժմյան յերջանկությանը նախնիք անգամ կնախանձեն, մթթե ուժան գնալու իր բաղձանքը մնալու յե անկատար։ «... Զորս ամենայն աւուրս հառաչանօք անցուցանեմ, առ որ եդի ի մտի այժմ կամ հասանել բաղձանաց իմոց, կամ տալ զանձն իմ ի վտանգ կորստեան»,—գրում է Աբովյանը կայսեր իր «Խոնարհամատոյց պաղատանքի» մեջ։

Անհամբեր Պարսից կամ Թագավորից թույլավորությունն ստանալու, մի վերջին փորձն է անում Աբովյանը։ Դիմում է Ցեփրեմին։ Պատանուն հաջողվում է Թախանձագին աղերսներով կոտրել կաթողիկոսի համառությունը։ Ցեփրեմը կոնդակ է արձակում, վորով թույլատրում է Աբովյանին սովորելու գնալ։ Բայց այս անգամ ել, ինչպես յերևում է, արգելք են լինում ծնողները, վորոնք չեն ուզում դարիբությանմատնել իրենց վորդուն։

Հուսախաբությանպահեր շատ ունեցավ ուռուցիածարավ պատանին, մինչև վոր 1830-ի գարնանամուտին ստացվեց Պարսոտի նամակը Աբովյանի անունով։ «Սիրելի բարեկամ,—գրում է Պարսոտն այդ նամակում,—ձեր վիճակը վորոշված է, կատարվել է՝ ինչ ցանկա-

նում եյիք։ Անհամբեր սպասում եմ ձեր ուրախաբեր գալստյանն։

Աբովյանն իր բախտն այլևս վճռված եր համարում։ Ցերազանքը դառնում եր իրականություն։ Նա այլևս շրջապատված չեր լինելու բամբասանքներով, դավերով։ Աբովյանը հեռանալու յեր վանքից, որի ծխական կամարների տակ կարող եր միայն նրա ճախրանքի ընդունակ հոգին շատ շուտ հանգչել, ծխացող մոխիր դառնալ։

* * *

Հրաժեշտի պահին մի խումբ հոգեվորականներ հարձակվում են նրա վրա, խլում շորերն ու ճամբի պաշարը, մի խոսքով անարգ կերպով վռնդում նրան վանքից իբր անհավատ։ Միակ հարազատ վայրը, ուր կարող եր պատանին թափել իր հոգու դառնությունը, հայրենի տունն եր։ Սիրելի ծնողների գիրկն ընկած ապաղա պանդուխտը գտավ իր վերջին մխիթարությունը։ Աբովյանի մեջ այնքան ուժգին եր Դորպատ գնալու փափագը, որ այս անգամ նա ուշադիր չեղավ նույնիսկ ծնողների պատգամանքին։ Ցավ արտասվալից աչք հրաժեշտ տվեց նա ծնողներին, հայրենի խրճիթին և ճանապարհ ընկավ դեպի Դորպատ։ 1830-ի սեպտեմբերի առաջին օրերին Աբովյանը հասավ Դորպատ։ Աբո-

վյանը մի նոր և անծանոթ աշխարհ էր ընկել։ Առաջին որերը խորթություն էր զգում նոր միջավայրում մի տեսակ՝ ճնշվում էր կամ ինչպես ինքն է ասում, ազատություն զգում։

Սեպտեմբերի 20-ին Պարրոտի տանը հացկերույթ կար։ Հրավիրված էին շատ հյուրեր, գլխավորապես պրոֆեսորներ։ Մի խառքով այնտեղ էր հավաքվել Դորպատի գիտական միտքը։ Հրավիրվածների մեջ էր նաև Աբովյանը։ Որը նշանավոր է։ բոլորս, էր Արարատի գագաթը բարձրանալու առաջին տարին։ Այդ յերեկո Պարրոտը հյուրերին ներկայացրեց իր հայ բարեկամին, վորը նշանավոր վերելքի ամենակրտսեր մասնակիցն էր։ Բոլորը շրջապատեցին նրան, գովեցին նրա յեռանդը, լուսավորության ձգտումը։ Հյուրերի ինդրով Աբովյանը կարդաց Արարատի գագաթը բարձրանալուն նվիրված իր մի բանաստեղծությունը գրաբար լեզվով։

Պարրոտի խորհրդով Աբովյանը համալսարան չընդունվեց։ Գերմանացի պրոֆեսորն այն կարծիքին էր։ վոր Աբովյանը մասնագիտական կրթություն չպետք է ստանա, յերբ, ինարկե, ցանկանում է իր ժողովրդին ոգտակար լինել։ Պարրոտը խորհուրդ էր տալիս նրան ուսանել այն բոլորը։ ինչ վոր կարող է հարկավորվել մի ուսուցչի։ վոր պետք

վերապահնա յերկիր՝ գրագիտություն, լուսավորություն տարածելու։ Ցեվ ժողովուրդը,—գրուշացնում եր Պարրոտը նրան,—յերբեք չի մոռանա այդպիսի մարդու յերախտիքը։ Ճաշին մեծ մասամբ Արովյանը Պարրոտների մոտ եր լինում, իսկ յերեկոներ՝ Դրասսի, վոր Դորպատի յերիտասարդ պրոֆեսորներից եր։ Մի քանի թեյի դուրս ելած՝ հայ և գերմանացի յերիտասարդները զրուցում եյին, պարապում։ Դրասսը վրէ միայն աշխարհագրական գիտելիքներ եր հաղորդում իր հայ բարեկամին, այլև գերմանական բանաստեղծության սքանչելի նմուշներից եր կարդում նրան։ Դրասսի սիրալիր վերաբերմունքը, ընության պարզությունն ու անմիջականությունը հափշտակում են Արովյանի զգայուն սիրտը։ Դրասսն իր մտերմին ծանոթացնում է ուրիշ յերիտասարդների հետ։ Հետզհետե Արովյանի ծանոթների շրջանն ընդլայնվում է, մեծանում։ Ամենուրեք շրջապատված զուարճությամբ, բարեկամական հոգատարությամբ, մշտական ուշադրությամբ՝ Արովյանը կամաց-կամաց ընտելանում է նոր միջավայրին, նրա վարք ու բարքին։

Պարրոտի բարեկամներն ու ծանոթները, վոր մեծ մասամբ գիտնականներ եյին, սիրով պարտավորություն առան ոգնել հեռավոր յերկրից յեկած հայ պատանուն։ Պարրոտը

Նրա հետ պարապում էր գերմաներեն և այլ առարկաներ։ Պրոֆեսոր Բլյումքերգը նրա հետ անցնում էր պատմության դասընթացը, իսկ պրոֆեսոր Ծրիդլենդերը՝ մաթեմատիկայի։ Գրասեր՝ աշխարհագրության։ Ուրիշներն էլ պարապում էին բնագիտություն, փիլիսոփայություն և այլ առարկաներ։ Կարճ ժամանակից Աբովյանը գերմաներենին տիրապետում է գրեթե իր կատարելության մեջ։ Պրոֆեսորները վկայում են, որ նա շատ շուտ սովորեց գերմաներեն գրել-կարդալ, իսկ խոսում էր այնպես, որ դժվար էր նույնիսկ կասկածել, թե նա հայ է և վոչ գերմանացի։ Նա սկսում է սովորել ֆրանսերեն, որին մի փոքր ծանոթացել էր Ներսիսյան դպրոցում։ Կատարելագործում է ռուսերենի իմացությունը, ձեռնարկում է լատիներեն սովորելուն։

Դորպատյան տարիներն Աբովյանի մտավոր կյանքի հասունության շրջանը յեղան։ Թիֆլիսում, հետո էլ Ծիմիածնում, նա մոտիկից ծանոթացել էր հայ պատմիչներին։ Միայն այժմ նրա միտքն սկսում է հասնել աշխարհի մեծագույն քերթողների գրքերի վրա։ Դորպատը բազում առիթներով ռոմանտիկական ներշնչումների աղբյուր էր։ Դորպատում էր այդ ժամանակ Ծրիդրիխ Կլինգերը, որի մի դրամայի անունով էլ մկբրա-

վել էր ռոմանտիկական ուղղությունը գերմանական գրականության մեջ։ Ծանոթ է յեղել Աբովյանը հետը, թե վոչ, հայտնի չէ, բայց անկարելի յե, վոր նա տեսած չլինի համբավավոր ժերունուն, վոր շրջելով Դորպատի փողոցներում՝ դորպատյանների հիշողության մեջ վոգեկոչում էր այն ազնիվ ու բարձրը, վոր քարոզում էր Sturm und Drang-յան ռոմանտիզմը։ Տիրելով գերմաներենին՝ Աբովյանը գիշերներ է լուսացնում Գյոթեյի ու Շիլլերի գրքերի վրա։ Մի ֆրանսիացի, վոր հետո ծանոթացել էր Աբովյանի հետ, ասում է, վոր Աբովյանը Շիլլերին ջրի պես գիտեր։ Եվ դեռ Դորպատում Աբովյանը հայերեն է թարգմանում Գյոթեյի ու Շիլլերի բանաստեղծությունները։ Նա քնագրով կարդում, ծանոթանում է Լեսինգին, Հերդերին։ Աբովյանը կարդում է Ռուսսոյին, վոգևորվում նրա գաղափարներով։ Իսկ շատ տարիներ հետո, ըստ յերևույթին, Յերևանում ձեռնարկում է «Նոր Ելոիզիա» թարգմանությանը։ Լատիներենն ոգնում է նրան ծանոթանալու անտիկ գրականությանը։ կարդում է Հոմերոսին, Սոֆոկլեսին, հռովմեականից՝ Վերգիլիոսին, Հորացիուսին, իտալականից՝ Դանտեյին, Պետրարկային։ «Իլիականից» հատվածներ է թարգմանում։ Անձամբ ծանոթանում է ռուսական ռոմանտիզմի մեծագույն ներկայա-

ցուցչին, Ժուկովսկուն, վորն Իտալիայից դառնալով Ռուսաստան, մոնբլանյան վողջույն հաղորդից աբարատյան յերկրի գավակին։ Թարգմանում է Կարամզին՝ ինչ Փիլիսոփաներից ծանոթանում է Լայբնիցի, Հեգելի, մանկավարժներից՝ Նիմայերի, Կամպեյի, Կրաուզեյի և ուրիշների գործերին։

Դորպատյան միջավայրն իր կնիքը դրեց Աբովյանի քաղաքական հայացքների վրա։ Այն յերկվությունը, վոր նկատելի յե Աբովյանի մտայնության մեջ, մեծ մասով ակունք է առնում Դորպատից։ Դորպատ նոր յեկած Աբովյանի հոգեբանության ու մտածական աշխարհի մեջ գծեր կային, վոր, անշուշտ, արդյունք էին եջմիածնական մթնոլորտի ազդեցության։ Հայրենասիրությունն Աբովյանի մոտ այժմ մի նոր յերանգ ստացավ, իր ակունքն առնելով յեվրոպական լուսավորչական շարժման գաղափարներից։ Բայց Աբովյանի հայացքների կազմավորման վրա մեծ ազդեցություն ուներ նաև Դորպատի անմիջական շրջապատը։ Աբովյանի աչքի առաջ անցավ Բուրշենշաֆտ կոչվող գաղտնի ուսանողական ընկերության դատը։ Չեր կարող նրա վրա ցնցող ազդեցություն չթողնել այն դաժան կարգն ու կանոնը, վորի կրնկի տակ տրորվեցին յերիտասարդ դորպատականների ազգային-լուսավորչական ազնիվ յերա-

դանքները։ Բացի այդ, անպայման Աբովյանի ականջին հասավ Բելգիայի անկախության ապստամբ կռվի զենքի շառաչը։ Բելգիական-նին անմիջապես հաջորդեց ապստամբությունը Լեհաստանի ներսում։ Հայելով թե այդ պոռթկումները հուզումնալից զրույցների տեղիք չտային այն յերիտասարդական շրջաններում, վորտեղ Աբովյանը լինում եր։ Պատահող քաղաքական իրադարձություններն անկարելի յե, վոր առիթ չտային յերիտասարդ հայրենասերին զուգահեռագծեր անցկացնելու ապստամբ ժողովուրդների և իր ժողովրդի բախտի ու ճակատագրերի միջև։ Չի վոր այդ բոլորն արդյունք եր այն ազգային ճնշումների, վորոնց յենթակա յեր մյուսների հետ և Աբովյանի ժողովուրդը։ Բայց այն մարդիկ, վոր անմիջապես շրջապատում եյին Դորպատում Աբովյանին, մեծ մասամբ չափավոր հայացքների տեր մտավորականներ եյին։ Չի կարելի ասել, թե նրանց խորթ եր ազատության զաղափարը։ «Ազատությունն է յառաջանա ամենայն բարիք»,—ասում է պրոֆեսորներից մեկն Աբովյանին։ Բայց ժանդարմական տապգի կրունկն անխղճորեն ճզմել եր ամեն մի հանդուգն միտք։ Պարբերաբար, վորի հորդորներն ու զրույցները միշտ լսում եր Աբովյանը, զգուշացնում եր հեռու մնալ խռովարար յերիտասարդներից, չշփվել

նրանց հետ, չտեղծել վտանգավոր կապեր։ Պատահած քաղաքական իրադարձությունները Պարբոտի զրույցների ազդեցության տակ կոչնում էին իրենց ռոմանտիկական հմայքը։ Նա կարողացել էր Աբովյանին խոր յերախտագիտության զգացում ներշնչել դեպի ցարը, վոր ընդհատակ էր գնացել նրա բաղձանքինց, միջոցներ տվել սովորելու, ուսում ստանալու։ Բուրգերը և ուրիշ պրոֆեսորներ լուսավորության մեջ էին տեսնում հայերի փրկությունը։ արթնացնել ազգային հոգին, լուսավորել, դրանից հետո ամեն ինքն իրեն կլինի։ Ցերբ մի ժողովուրդ լուսավորված է, դժվար է նրան քաղաքական ստրկացման յենթարկել, և, վերջապես, այդպիսի մի ժողովուրդ կունենա այնքան ազգային արժանապատվություն, վոր թույլ չի տա իրեն ճրպատահար անելու։ Լուսավորությունը տարածել ժողովրդի մեջ, քաղաքակրթել յերկիրը, ապա նոր, մի ընդհանուր և միասնական հայրենիքի մասին մտածել։

Ահա այս քաղաքական մտայնությունը ներշնչեց նրան դորպատյան միջավայրը։

Ասում են, վոր «հայրենի յերկրի կարոտը հանգիստ չեր տալիս նրանց։ Պատմում են, վոր Աբովյանի տան առաջ մի մենավոր ծառ է յեղել։ Պանդուխտ յերիտասարդը լուռնկա գիշերներին նստում էր այդ ծառի տակ, մեջ-

Aqueducto romano, Segovia.

ջը ընկնում գեմ տալիս, աչքերը յերկնքին գցած՝ զրուցում լուսնի ու աստղերի հետ իր հայրենի աշխարհի մասին։ Շատ անգամ եվ արցունքն աչքերին յերգում եր, ու այդ կարոտի յերգերի վրա իշխում եր մի անհուն թախիծ։ Հայրենիքից տխուր լուրեր եր առնում։ Վախճանվում է հայրը, ավազակների ձեռով սպանվում է ուսուցիչը։ Ալամդարյանը։ Վշտից Աբովյանն անկողին է ընկնում։ Բարեկամները շրջապատում են նրան, վոր շատ չտրամի։ Բայց դժվար եր ամոքել նրա վերքը։ «Լուսահոգի հոր հիշատակին» մի սրտառուչ բանաստեղծություն է գրում։ Իր մի ծանոթի ուղարկած հոդվածն Ալամդարյանի մասին թարգմանում է գերմաներեն և հրատարակում տեղական թերթերից մեկում։ Ալամդարյանի պատճառով ընդհարվում է «Северная пчела»-ի խմբագիրը, ռուս գրող, յերրորդ բաժանմունքի լրտես Բուլգարինի հետ։ Այս բոլորը պատճառ եյին, վոր նրա միտքը թև առած թռչեր դեպի հայրենի լեռներն ու ձորերը։ «Ի գիշերի և ի տուանջեան սլանան, վերանան ի միտս այն նազելի կողմանն Արարատայ,—յորս երբեմն խաղայի գիսաղ ոսկեղեն մանկութեան իմոյ»—հառաչանքով գրում է Աբովյանն իր մի նամակում։ Ամբ նորից պետք է, հարցնում է նա, իր աչքերը տեսնեն հայրենի ծուխը, յամբը պետք է կրկին

ծիծաղելի իր առաջ յեկնեն Հայաստանի լեռները, յիրը պեսք և դարձյալ ծծի անմոռանալի հայրենիքի ծաղկաբեր դաշտերի վրայով նազանքով անցնող հարավային մարմանդ զեփյուռը։ Պանթեիստ Աբովյանի մեջ նստած եր խանդավառ հայրենասերի հոգին։ Որ ու գիշեր նրան մտատանջում եր հայրենիքը վերազատելու, ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու միտքը։ Այդ դաղափարը նրան այնքան եր զբաղեցնում, վոր մի գիշեր եկ յերազ և տեսնում իբր թե ինքն արդեն Հայաստանում և, յեկեղեցում հասարակության առաջ քարոզ և ասում։ Հանկարծ ներս և մրտնում Պարրոտը։ Պատկառանքից Աբովյանը կարկամում և, մինչև վոր անվանի գիտունը խրախուսական խոսք և ասում. «Սովորեցրեք հայ մանուկներին, սովորեցրեք, ինչու լռեցիք։ Այս մի հատիկ որինակն եկ բավական և դաղափար կազմելու, թե ինչ խոհեր ու հույզեր եյին փոթորկում ապագա առաքյալի միտքը։

Եթե ուզեր, նա կմնար այդ լուսավորված աշխարհում, ապահով ու հանդիստ կյանք կտեղծեր իրեն համար։ Շատ դժվար եր հեռանալ և այլևս չդառնալ Դորպատ, ուր այնքան շատ բարեկամներ ու ծանոթներ ուներ, ուր չքնաղ Լոտտեն նրան այնքան հրճվանք ու բերկրություն բերեց։ Այո, շատ բան նրան

կապում եր Դորպատի հետ, սակայն մնալն այլևս անկարելի յեր։ Աբովյանը չեր ուզում նոյան ագռավ լինել։ Նա յերբեք չմոռացավ, վոր ինքը, գեռ քսանամյա պատանի, Արարատի գագաթին ուխտ եր կապել գնալ, սովորել, վերադառնալ յերկիր, գործել ժողովրդի մեջ։ Հայրենիքն սպասում եր։ Պետք եր շտապել։

1836-ի գարնանն Աբովյանը հրաժեշտ տվավ Դորպատին։ Նա վերադառնում եր հայրենիք հեղաշրջված։ Դորպատյան կյանքը մի շատ կարևոր, ճակատագրական դարձակետ յեղավ նրա կյանքում։ Դա յեղավ նրա յերկրորդ ծնունդը։ Աբովյանը մեկնել եր Դորպատ գրեթե մինչնադարյան հայացքներով, սահմանափակ գիտելիքներով, բնավորությամբ կատարելապես նահապետական գեղջուկ, տիպական հետամնացության դրոշմը մաքի և հոգու վրա։ Այժմ այնտեղից նա դառնում եր իբրև մի լուսավորված, կրթված մարդ, գիտուն, բազմահայաց, կատարյալ յեվրոպացի։ Բոդենշտեդտի խոսքերով ասած՝ նա դառնում եր հայրենիք իբրև գերմանական և ընդհանրապես յեվրոպական առաջավոր կուլտուրայի առաքյալ արևելքում։

*
* *

Աբովյանն շտապում եր հայրենիք։ Վար-

դագուլն հուլյսերի մեջ եր։ Ճանապարհին զործունեությյան ծրագրեր եր կազմում։ Նա փափագում եր ենթիածնում յեվրոպական հիմունքներով դպրոց հիմնել, ժողովրդական ուսուցիչներ պատրաստել։ Բայց, ավաղ, մի խոր հիասթափություն եր սպասում նրան։

Թիֆլիսում նա հանդիպեց Հովհաննես Կարբեցուն։ Աբովյանի հակառակորդներն արդեն կարողացել եյին կաթողիկոսին ներշնչել այն միտքը, թե նա լութերական է, հալատից, յեկեղեցուց շեղված։ Աբովյանը ներկայացավ Կարբեցուն «ռասա դավանությունների» նախարարի հանձնարարական նամակով։ «Հրամանաս գաս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հաւատոյ, դու լաւ խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսա չէ քո գործ»,—այս խոսքերով դիմավորեց կաթողիկոսն Աբովյանին։

Աբովյանը միայնակ մնաց։ Բոլորը յերես դարձրին նրանից։ Նա այլևս կովան չուներ։ Հուսախաբ յեղած Աբովյանին հարկավոր եր բոպե առաջ հրաժարվել Եջմիածնի հետ կապած հույսերից։ Բայց նա այն ժամանակ այնքան ուժ և կորով չգտավ իր մեջ։ Նա չկարողացավ այրել այն կամուրջները, որ նրան կապում եյին յեկեղեցու հետ։ Ինքն իր մտորումների հետ՝ Աբովյանը դեգերեց Թիֆլիսում, քաղցի մատնված։ «Զամ միս

և կէս Ռացի ի Տփխիս՝ յետ վերադարձի իմոյ Եւրոպիոյ կարօտ և աւուրն պարենի։ Զարքունական ծառայութիւն յամենայն բոպէի առաջադրէլին ինձ, այլ իմ իդձ և նպատակ էր ոչ թողուլ զհոգեւորական կոչումն իմ»,— հիշում է Աբովյանը տարիներ հետո։

Բայց այդպես շարունակել անկարելի էր։ «Սոխպեալ ի չքաւորութենէ մարի ի պաշտօն արքունական, զոր ոչն երբէք կամէիր»—գրում է Աբովյանը։ 1837-ի փետրվարի 12-ին Աբովյանը նշանակվում է Թիֆլիսի գավառական ուսումնարանի տեսչի պաշտոնակատար։

Ցերեռնական թ.թ., այսինքն Աբովյանի ժամանակ, Թիֆլիսն Անդրկովկասի կուլտուրական կյանքի առանցքն էր։ Դա մի բազմազգի ընտանիք էր՝ հայ, վրացի, ազրբեջանցի, ռուս, գերմանացի, ֆրանսիացի—վորքան կուզեք։ Ռուս հեղափոխականների համար Թիֆլիսը դառել էր աքսորավայր։ Դեկաբրիստներից մի քանիսը, ինչպես և ընդհանրապես քաղաքականապես անբարեհույս ճանաչված ռուս մտավորականներն ու գրիչներն աքսորված եյին Թիֆլիս։ Այդ տարիներին, ինչպես և մի փոքր առաջ, Ռուսաստանում խուլ և լռելյայն, հեռուներում՝ ավելի ապիաշկարա, առաջավոր միտքը հուզված հետևում էր ռեակցիային, վորի կրնկի տակ

ուրվագիծ, ճշգրիտ եր ամեն ազնիվ ճշմարտություն, ամեն բարձր միտք։

Պաշտոնի անցնելով Թիֆլիսում Աբովյանը պետք և ապրեր, շնչեր այդ մթնոլորտում։ Անկարելի յեր, որ նրան լավ չճանաչեին քաղաքում, որովհետև Դորպատից եր յեկել, համալսարանական համբավ ուներ, լեզուներ գիտեր, մի խոսքով՝ իր ժամանակի կրթված մարդկանցից մեկն եր, այսինքն՝ այնպիսի մեկը, որի նմանները շատ քիչ ու հազվադեպ եյին այն ժամանակ Թիֆլիսում։

Ուսումնարանում Աբովյանը ծանոթանում և Միրզա Ջաֆարի Ախունդովի հետ—ազգաբնչանական նշանավոր գրող և փիլիսոփա, որի վրա Աբովյանը, անշուշտ, մեծ ազդեցություն և ունեցել։ Միասին նրանք աշխատում են մինչև 1840-ը։ Հոժարակամ հեռացած Ախունդովին փոխարինում և մի այլ վոչ պակաս նշանավոր դեմք, ազգաբնչանական հայանի բանաստեղծ, հետագայում համայնվրոպական հռչակ ձեռք բերած Միրզա Շաֆին, որն ընկերների շրջանում, Բոդենշտեդտի արտահայտությամբ՝ «Գյանջայի իմաստունի» համբաւն ուներ։ Պահպանվել և այն գեկուցագիրը, որով Աբովյանն անձամբ յերաշխավորել և Միրզա Շաֆուն՝ բարձրագույն իշխանությունների առաջ, դպրոցում նրան դասեր տալու համար, վկայելով նրա

անձնական և իմացական արժանավորությունները։ Ինչպես Ախունդովի, այնպես էլ առավել ևս Միրզա Շաֆու հետ, Աբովյանը բարեկամական անխախտ կապերի մեջ է յեղել Լավը, ազնիվը ու մարդկայինը ադրբեջանցի և հայ գործիչներին միացրել էր մի ջերմ, անքակտելի բարեկամությամբ։

Աբովյանը ծանոթություն է ունեցել վրացի մտավորական Զուբալաշվիլու հետ։ Ստ. Նազարյանի վկայությամբ՝ Զուբալաշվիլին համամիտ էր հայ և վրացի ժողովուրդների վերածնության մասին ունեցած իր և Աբովյանի հայացքներին։ Զուբալաշվիլին առաջին վրացին էր յեվրոպական կրթությամբ։ Մի շարք լեզուներ է իմացել։ Դեռ այն ժամանակ ընագրով կարդացել է «Այվենգոն», շրջել է յեվրոպական քաղաքները, Դորպատում ծանոթացել է Նազարյանի հետ։

Աբովյանի Թիֆլիսյան ծանոթներից էր նաև գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Ռոդենշտեդտը, որի համար նա հավաքել էր քրդական և ադրբեջանական ժողովրդական յերգեր։ Աբովյանը ծանոթ է յեղել նաև ուկրաինական բանաստեղծ Ռոսկովշենկոյի հետ։

Այս էր նրա միջավայրը Թիֆլիսում։

Ուսումնարանում նրան շրջապատում էին հայ յերեխաների հետ նաև վրացի և ադրբեջանցի մանուկներ։ Մանկական աշխար-

հը,—ինչպես յերևում է Ֆրենին գրած նամակից —վաղուց ի վեր յեղել է Աբովյանի համար բոլոր յերկրային օրտահաճ բախտավորություններից ամենաքաղցրը, նամանավանդ, որ այդ յերկու հարյուրի չափ աշակերտներն իրենց սերն ու համակրությունն են պարգևել նրան։

Աբովյանը հիմնում է նաև մի մասնավոր դպրոց։ Սկզբում վանքի բակի մի սակ խցում, իսկ հետո՝ իր տանը հավաքում է մի խումբ հայ, ադրբեջանցի և գերմանացի յերեխաներ, թվով 25 հոգի և պարապում հետներն իր ուզածի պես։

Ճանապարհորդ Մորից Վագները, որ իր գրքում բավական եջեր է նվիրել Աբովյանին, պատմում է նրա աշակերտների ուսումնական առաջադիմությունը։ Այն, ինչ տեսել է Վագները, մի կատարյալ անակնկալ եր յեվրոպացու համար։ Նա պատմում է, որ 10-14 տարեկան տղաները շատ լավ կարդում և գրում եյին հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն, ֆրանսերեն և մանավանդ, գերմաներեն։ Վագները զլսեց գերմաներեն մեր կարդալը, խոսելը, զարմանք հայտնեց մեր առաջադիմության վրա,—պատմում է Աբովյանի աշակերտներից Աքիմյանը,—վարժապետս աշակերտներիս գերմաներեն հարցեր եր տալիս, մենք նույն լեզվով ազատ պատասխա-

նում եյինք։ Վազները հիանում եր, յերբ յես Շիլլեր եյի կարդում ու իմ բառերով պատմում, իսկ Խաչիսյանց Գաբրիելը՝ Գյոթեյի վոտանավորներն եր կարդում ու արձակ պատմում։

Մանավոր զարոցի վրա պետական-չինովնիկական աչքը չեր հսկում։ Մանավանդ վոր զարոցն Աբովյանը հիմնել եր 1837-ին, թագուն պետությունից, իսկ պաշտոնական թուլավությունն ստացել եր միայն 1840-ին։ Աբովյանն անում եր կամեցածը։ Աշակերտների ձեռից վերցնելով Սազմոսը, ավետարանը, Աբովյանը նրանց ձեռն և տալիս Գյոթեյի և Շիլլերի գրքերը։ Իր աշակերտների համար նա փորձում և կազմել ուսումնական ձեռնարկներ հայերեն լեզվով։ Նախ կազմում և «Նախաշավիղը» (մի այբբենարան իր ընթերցարանով)։ Այնուհետև կազմում և մի աշխարհագրական ձեռնարկ, վորը բացվում և «Ամերիկու լուս քցիլը» ակնարկով։ Ցեվ վերջապես «Ռուս տեսական և գործնական քերականությունն հայերեն լեզվով ըստ Տապպիա»։ Վերջին ձեռնարկով Աբովյանը փորձում և հեշտացնել ռուս լեզվի ուսումնասիրությունը հայերի մեջ։ Նա դատապարտում և ռուսերեն խոսքերը լատինական տառերով գրելու յեղանակը։ Նա չի ընդունում նաև ռուս լեզվի ատանձին հնչյունները հայերեն տառերով ա-

վանդելու ձևը և առաջ և քաշում ավելի ճիշտ և նպատակահարմար տրանսկրիպցիայի անցնելու պահանջը։ Նույն պահանջը, Աբովյանից անկախ, առաջ էր քաշել նաև գերմանացի հայկաբան Պետերմանը։

Աբովյանը, ինչպես պատմում են նրա աշակերտները, անչափ զգայուն, ջղային մարդ էր։ Ամենաթեթև առիթից հուզվում, բորբոքվում էր։ Իրեն մանկավարժ շատ խիստ էր։ Չէր կարողանում տանել, յերբ մեկը դասի ժամանակ անուշադիր էր մնում դեպի իր խոսքը։ Համբերությունից դուրս յեկած՝ յերբեմն դիմում էր ծեծի, թեև սկզբունքով դեմ էր դրան։ Որինակ, Գաբրիել Օունդուկյանը, վոր նույնպես յեղել է Աբովյանի աշակերտներից, պատմում է, թե ինչպես մի քանի անգամ իր յեղբորը, Միքայելին, դասի ժամանակ Աբովյանը նկատողություն և անում վոր ուշքը վրեն պահի, յեղբայրը չի լսում։ Բարկացած՝ Աբովյանն ականջից քաշում է։ «Բայց նա անչափ նրբազգաց սիրտ ուներ,— պատմում է Աքիմյանը,— քիչ ժամանակից հետո սկսում էր ծեծված աշակերտին փայփայել և իրա արածի վրա արտասվելու չափ զգացվելը։ Բոլոր աշակերտներն էլ առում էին, վոր նա միայն ուսուցիչ չէր, այլ հոգատար հայր։

***

1838-ին Աբովյանը խնդրատու յե լինում Եջմիածնի տինոդին իրեն հոգևոր կոչումից ազատելու մասին։ Պատճառներից մեկն էլ մի մատաղահաս գերմանուհի յեր, Եմիլիա Լոռզե անունով։ Աբովյանն Եմիլիային հանդիպել եր Թիֆլիսի գերմանական գաղութում, ուր հաճախ, վշտացած պահերին, գնում եր վերհիշելու իր դորպատյան կյանքի տարիները։ Սիրահարված քոանամյա Եմիլիային՝ Աբովյանն անհամբեր սպասում եր տինոդի վճռին։ 1839-ի սկզբներին պատասխան ստացվեց։ Աբովյանն այլևս հոգեվորական չեր։ Նույն տարվա աշնանամտին Աբովյանը և Եմիլիան ամուսնացան։

***

Աբովյանին չեյին հասկանում։ Նա բարձր եր կանգնած ժամանակից և միջավայրից։ Մենակ եր ու անոգնական։ Եջմիածնի ու հոգեվորականության հետ վաղուց գժված եր։ Առևտրական դասը յերբեք ընդառաջ չգնաց նրա լուսավորչական ծրագրերին։ Բարձր պաշտոնյությանը, ինչպես յերևում է, այնքան էլ բարեհաճություն չեր ներշնչում դորպատյան համալսարանականը։ Իսկ նրա անմիջական շրջապատը մի կատարյալ ճահիճ

եր։ Պաշտոնակիցների հնավանդ հայացքները, մանկավարժական անկարողությունը, նախանձն ու չարակամությունը խանգարում էին նրան փոխելու դպրոցի ներքին կյանքը, յեվրոպական հոգի հաղորդելու նրա ուսումնական առարկային։ Աբովյանն ամենուրեք հանդիպում եր անտարբերության։ Նրան շրջապատում եր թշնամությունը։ Անպակաս եր վորոգայթն ու դավը։ Նա ազատում չուներ այդ մարդուկներից։ Նրանք կրնկակոխ հետևում էին Աբովյանին, գրպարտում, դավեր սարքում նրա դեմ։ Առաքյալին ստիպում էին պատիկանալ, նմանվել մյուս չինովնիկներին, դառնալ մի սովորական քաղաքնի, հրաժարվել այն բարձր իդեալներից, վորոնք այնքան համայք ունեին նրա աչքում։

Ինչպես շուտ վոգևորվող, այնպես էլ շատ շուտ հուսահատվող, ընկճվող եր Աբովյանը։ Մանր ու անմխիթար որեր շատ ապրեց։ Ակադեմիկոս Ֆրենին և Սա. Նազարյանին գրած նամակներն Աբովյանի հոգեկան փոթորկումների լուռ հուշագրերն են։ «Ցեռա տարուբերվում եմ տաշեղի վրա մի ալեկոծ ծովի մեջ»,— ասում է նա Ֆրենին։

Աբովյանը վորոշեց Թիֆլիսից փախչել։ Գանգատվելով իր վիճակից։ Աբովյանը մի նամակում Ֆրենին հարցնում է. «Կարող է արդյոք Պետերբուրգում մի անկյուն գտնվել,

վորտեղ յես կարողանամ իմ հացը հայթայ-
թելը։ Ցրենն ոգնության հասավ։ Ազգային
լուսավորության նախարարության առաջ նա
հարց բարձրացրեց Ղազանի համալսարանում
հայոց լեզվի և գրականության ամբիոն հիմ-
նելու մասին։ Նրա առաջարկն ընդունվեց։
Ցրենի առաջարկով ամբիոնի պրոֆեսորու-
թյան թեկնածու առաջ քաշվեց Աբովյանը։
Վեր ամոյա ժամկետ նը սահմանված գիտա-
կան շարադրություն ներկայացնելու՝ ամբիո-
նի պրոֆեսորությունը ձեռք բերելու համար։
Այդ մասին Աբովյանն ուշացումով իմացավ։
Նա շտապեց ուղարկել իր յերկու պատրաստ
աշխատությունները։ Մեկը «Ռուս տեսական
և գործնական քերականություն հայերեն լեզ-
վով», մյուսը՝ այբբենարանն իր ընթերցա-
րանով հայ պատանիների համար։ Վերջինս
հոչակավոր «Նախաշավիղն» է։ Աբովյանը բո-
լորովին անհույս էր, վոր «նման աշխատանք-
ները համապատասխան չինեն» ակադեմիայի
պահանջներին։

Գրախոս նշանակվեց ակադեմիկոս Բրոսենն։
Վերջինս Աբովյանի մեջ տեսնում է այն մար-
դուն, վոր առաքելություն է վերցրել լուսա-
վորել իր ազգը։ Նոր լեզվի ժխտումը և հնի
պահպանումը,—մեջ է բերում Աբովյանի միտ-
քը Բրոսենն,—պատճառ է դառնում թանձրա-
ցած տգիտության, վորի մեջ խորասուզված է

ժողովուրդը և, նույնիսկ, ինքը հոգեվորակա-
նությունը։ Բրոսսեն խոստովանում է, վոր
ինքն այնքան էլ համակիր չէ հայ ժողովուրդ-
դական լեզվին, բայց «յերբեք մոքովս չեմ
անցրել,—գրում է նա,—վոր յես շուտով ստիպ-
ված պիտի լինեմ փոխել կարծիքս... և այդ
մեր հեղինակի շնորհիվ, վոր ներշնչեց ինձ
դրա գաղափարը»։

Չնայած դրան, Աբովյանի հայացքների խոր
դեմոկրատիզմը նրան յերկընտրանքի մեջ էր
գցել։ Բրոսսեին դուր չեն յեկել Աբովյանի
կրքոտ հարձակումները յեկեղեցական լուսա-
վորության և ընդհանրապես հոգեվորականու-
թյան դեմ, ինչպես և նրա այն հանդուգն
հայտարարությունը, թե գրաբարը Հայկից
սկսած ժողովրդի համար մեռած լեզու յե յե-
ղել, թե նա անոգուտ է և, մինչև իսկ, վնաս-
ակար։ «Նրա այդպիսի պնդումները,—ասում
է Բրոսսեն,—իսպառ թույլ չեն տալիս կարծել-
ու, վոր նա ի վիճակի պետք է լինի պատ-
վով կատարելու իր պարտականությունները»։

Աբովյանը, վորն անհամբեր սպասում էր
պատասխանի, 1841-ի սկզբներին հետ ստա-
ցավ իր ձեռագիրը։ Դա մերժման նշան էր։

* * *

Պաշտոնական մտայնությանը գերի մնա-
ցած մտավորականությունից հիասթափված՝

Աբովյանը փորձում է ավելի մերձենալ ժողովրդին, մտնել նրա խորքը, ճանաչել նրա հոգեբանությունը։ Աշակերտները պատմում են, որ նա առանձին սեր ուներ դեպի ժողովրդական տոները։ Դա նրա համար անհոգ զվարճանքի աղբյուր չեր։ Նա ուզում եր ժողովրդի մեջ լինել, շփվել, լսել նրա զրույցը, դիտել վարք ու բարքը, իմանալ ինչն է հուզում, վոգեվորում այս հասարակ ու պարզ մարդկանց։ Այն, Դորպատում ուսած, յեվրոպականացած Աբովյանը չեր խորշում ժողովրդից, ինչպես շատ մտավորականներ, այլ, ընդհակառակը, վորտեղ ջիրիդ եր լինում, մուշտակով կամ գեյնոբա, շտապում եր այնտեղ։ Մեծ հետաքրքրություն ուներ դեպի ուխտագնացությունները։ Մի անգամ կնոջ և մի խումբ աշակերտների հետ նա մասնակցում է սուրբ Գեվորգի տոնախմբությանը։ Զվարճատեր ուխտավորները, գիշերով, բաց յերկնքի տակ, խարույկ եյին վառում, տառում, խոտում, ծիծաղում կամ կրակի շուրջը նստած՝ աշուղների նվագին ու խաղին եյին ականջ դնում։ Մի խոռքով՝ ամեն կողմ զուռնա, յերգ, պար։ Միայն Աբովյանը խրախճանքը թողած, շրջում եր ուխտավորների մեջ, խոսում նրանց հետ, կամ լուռ լսում նրանց խոսքն ու զրույցը։ «Շատ անգամ,— պատմում է Աբովյանը «Վերքիս» առաջաբանում,— վոր

զոնապ եյի գնում, յա քաղաքումը անց կենում, ուշ ու միտքս հավաքում եյի՝ թե տեսնիմ խալխը խոսալիս, քեֆ անելիս, ինչ բաներից ա ավելի հազ անում։ Շատ անգամ տեսնում եյի, վոր մեյդանում, փողոցում մեկ քսան աշղի ենպես են հայիլ-մայիլ ճռացել ու կանգնել՝ ականջ դնում, փող բաշխում նրան, վոր բերանները ջուրը գնում երա։

Աբովյանն ինքն սկսում է հավաքել ժողովրդական խոսքն ու գրույցը, առակները մշակել, գերմաներենից, ֆրանսերենից ու ռուսերենից թարգմանել, փոխադրել, բայց այնպես, «վոր խալխի սրտով ելիա։ Ժողովրդական «ջանգյուլուճներին» նմանությամբ նա հյուսում է իր բայաթիների շարքը։ Այս բոլորը նա հավաքում է մի գրքի մեջ «Զարապ վախտի խաղալիք» ընդհանուր վերնագրի տակ։ Աբովյանի կյանքի այս շրջանը հարուստ է հազար ու մի հղացումներով։ Բացի ֆոլկլորային նյութեր հավաքելուց, նա փորձում է աշխարհիկ նյութի հիման վրա ժողովրդական լեզվով մշակել գրեթե գրական բոլոր ժանրերը. վեպ, պատմվածք, դրամա, առակ, յերգիծական պոեմ, բանաստեղծություն, քառյակ, մանկական վոտանավոր, թարգմանություն, ակնարկ, հոդված և, վերջապես, եպիստոլյար գրականություն։ Այս շրջանում նա գրում է «Թուրքի աղջիկը», «Առաջին սերը»,

«Ովանես» պատմվածքները, «Հաղարփեշան» յերգիծական պոեմը։ Գրում է շատ ուրիշ գործեր էլ, բայց ամենանշանակալիցը, վոր նա ստեղծեց այդ տարիներին, հռչակավոր «Վերք Հայաստանի» վեպն էր։

Աբովյանը գիտեր, վոր իր արածը դիմադրություն է հանդիպելու։ Նա «Պարապ վախտի խաղալիք» գրքի առաջաբանում գուշակում է իր գրքերի գլխին գալիք փորձանքը։ «Վախենում եյի, թե ժամանակս, փողս, կորչի։ գրքերս էլ մեկ տեղ թողումը վեր ընկած ՁԵա, փթիր։ Բայց նա հույսերը չի կորցնում։ Բարեկամներն ու ծանոթները խորհուրդ են տալիս գրքերը տպել տալ։ Պահպանողական միտքը ծառս է կանգնելու իր գրքերի դեմ,— այսպես եր համոզված նա։ Գրքերից մեկին նա մի այսպիսի խրատ է կցում.

Գնա, իմ խեղճ գիրք՝ գնա մարդամեջ.
Գլուխդ քաշ գցիր, մի նեղանար հեչ։
Ականջդ փակիր, սիրտդ լեն բռնիր,
Ինչ ասեն, խոսին, ամբ ու համբերիր։

Ամեն մի խոսքին ականջ դնողը
Գլուխը կկորցնի, յա ելած դուղը։
Ով լայաղ չանի քեզ վերցնի, կարիա.
Թող իր շնորքը պահի, մոտ չը գա։

Աբովյանն անհույս չեր։ Այս խրատի մեջ

Նա շատ պարզ ասում է, որ կգա ժամանակ, երբ մարդիկ կիմանան, կհասկանան իր գրքերի արժեքը, կդան ուրիշ մարդիկ, և իր որինակով կգրեն, կմշակեն, «գրեա լավը կշինեն»։ Աբովյանին հավատ էր ներշնչում ժողովուրդը։ «Թե դիտուն, խելոք մարդիք ինձ պախարակեն, դու էլ ա ինձ պահիր՝ սիրելի ազգ, շունքի իմ ուզածս են ա, որ քեզ ծառայեմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերնումս ա,—դիմում է նա ժողովրդին։

Գոտեպնդված, ուժ առած ազնիվ բարեկամների խոսքից, քաջալերանքից, ժողովրդի համար բարին ու գեղեցիկն անելու բարձր գիտակցությունից, Աբովյանն անքուն գիշերներ էր լուսացրել սեղանի մոտ, գրքերի ու թղթերի մեջ թաղված։ Վոգեվորության այդ նվիրական պահերին նա թղթին էր հանձնում իր մտքերը, հույզերը, այդպիսով հիմք դնելով հայ նոր գրականության։

* * *

«Վերք Հայաստանի»,—ահա այստեղ է խոկան Աբովյանը։ Դա նրա կյանքի կոթողն է, վաստակի փառքը։ «Վերքը» յեղավ այն յերջանիկ գիրքը, որով բացվում է հայ նոր գրականության տարեգրությունը։

Ի՞նչը ստիպեց Աբովյանին գրելու «Վերքը»։ Աբովյանն առաջինը դիտեց, որ հայերենը

մոռացվում և. ժողովուրդը մոքերն արտա-
հայտում է թուրքերեն, մտավորականությունը
ռուսերեն։ Մի ներքին վողբերգություն
ապրեց։ Դա միայն մանկավարժի, աշակեր-
տին սիրող ուսուցչի հոգեկան ալեկոծումը
չէր, այլ և հանդուգն քաղաքացու, որի հո-
գում գլուխ էր բարձրացրել վիրավորված ազ-
գային արժանապատվությունը։ Շատ մոայլ
էր պատկերանում ապագան Աբովյանին։ Լեզ-
վի հարցը, գրաբարը, թե աշխարհաբարը, նրա
համար մի սովորական հարց չէր։ Այդ հարցի
անհապաղ լուծումը մի ժողովրդի ազգային
ինքնագիտակցության գա ու անդրանիկ, բայց
հուժկու պահանջն էր։ Աբովյանը տեսնում
էր, որ այլևս վոչ մեկը հայերեն գիրք չի
առնում ձեռքը, հայերեն խոսողներն էլ շատ
հազվագեպ են։ Աբովյանը նկատել էր, որ
վառվռուն պատանիները հորանջում, քնում
են հայերեն գրքերի վրա։ Հայերեն գրքերը,
մեծ մասամբ, ժամագրքեր էին և, անպայ-
ման, գրաբարալեզու։ Եվ, ընդհակառակը,
այդ նույն աշակերտները հափշտակված կար-
դում էին ռուսերեն, գերմաներեն և ֆրան-
սերեն լեզվով ձեռքերն ընկած գրքերը։ Փո-
խանակ վառելու, բորբոքելու յերեխայի յե-
ռեվակայությունը՝ հայերեն գրքերն ապա-
նում, մեռցնում էին ամեն հետաքրքրու-
թյուն և աշխույժ։ Պատճառը գրաբարն էր։

«Մեկ ազգի պանդոկն էլ լեզուն է ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վայն եկել է մեր որին»,— ասում է Աբովյանը «Վերքի» մեջ։ Լուծել լեզվի հարցը, այսինքն քաղաքացիություն տալ ժողովրդական լեզվին, որը հասկանալի էր «հարիր հազարին», հարազատ ու մոտ բոլորին, նշանակում էր կամուրջ գցել գրականության և իրականության միջև, գիրը, գրավոր խոսքը հանել վանքի խցերից, տանել կյանք, մտցնել ժողովրդի մեջ, դարձնել նրա սեփականությունը։ Վերջապես, այդ նշանակում է՝ ժողովրդին ազգային միասնության բերելու գաղափարն ապահովել։

Բայց դա հարցի միայն տեսական կողմն էր։ Լուծումը պահանջում էր գործ։ Առաջին խիզախը յեղավ նա, ով այնքան կրքոտ ապարեզ էր քաշել այրող հարցը։ Այսինքն՝ ինքը, Աբովյանը։ Բարիկենդանի տոներին, աշակերտներին արձակելով, Աբովյանը քչփորում է իր հիշողությունը, այն բոլորը, ինչ տեսել, լսել ու ապրել էր յերեխա ժամանակ Թոնաքեռում։ Աբովյանի միտքը կանգ է առնում մի խոշոր պատմական անցքի վրա, որին ինքը ժամանակակից ու ականատես էր յեղել պատանի հասակում։ Ահա այդ նյութի վրա նա վորոշում է կառուցել իր առաջին վեպը։

«Վերքի» նյութն այն հեռաքրքրական

պատմաբանները և, երբ Հայաստանը գտնվում էր հեծեծում էր պարսկական լծի տակ։

Վիպագրողը բացում է ճնշված ժողովրդի վերքը, նրա վողբերգությունը։ «Ժամանակը ենպես էր ծռվել, վոր մարդ իր գլուխը չէր կարում պահեր,—ասում է Աբովյանի գյուղացին։ Հայ գյուղացին դժգոհ էր։ «Վերքը» նրա տրտունջքի փիլիսոփայությունն է։ Գյուղացին իր դատածի տերը չէ։ «Վոչ տունն էր իրանը, վոչ մալը, վոչ ապրանքը, վոչ ջանը, վոչ ոպլուշաղը»։ Գյուղացուց խլել են ամեն բնչ։ Խլել են վոչ միայն ինչքը, այլև պատիվը։ Սարդարի չնչին պաշտոնյաների կրնկի տակ տրորվում է հայի մարդկային կոչումն ու արժանապատվությունը։

Վա՜յ են ազգին՝ վոր աշխարքում
անտեր ա,
Վա՜յ են յերկրին՝ վոր թշնամու
գերի ա,
Վա՜յ են խալխին՝ վոր ինքն իր
կյանքն, աշխարքը
Չի պահպանիլ, ու հարամու
ձեռ կը տա։

Բայց թշվառությունն էլ ափ ու սահման է ճանաչում։ Վիշտ ու տառապանք, ամեն անարգանք տեսած ժողովուրդն էլ իր հերոսականն

ունի։ Համբերությունը հատած ժողովրդի արտունչքն ել կարող է ծնել հանդուգն, խիզախ մարդիկ, վոր ախոյան կանգնած հեգ ժողովրդին, կռվեն, արյուն թափեն նրա համար։ Դա ժողովրդի ազատանոչ վոգին է, վոր այսոր Ազատու, վաղը Հովակիմի, մյուս որը մի այլ անուն ու կերպարանք առած, գնքը ձեռին բարձրացնում է գլուխը։ Ազատասիրությունն ամեն մի ժողովրդի անկապտելի իրավունքն է։ Ազատին արյուն է թափում այդ իրավունքը ձեռք բերելու համար։ Նա իր գլուխը դնում է մահու տակ։

Այն քաղաքական մտայնությունը, վորի վրա հեղինակը կառուցել է իր վեպը, արտափայլում է Արովյանի նպատակի գլխավոր կիրքը, ազգային ազատագրական շարժումը։ Ազատու ըմբոստացումը պարսկական տիրապետության դեմ ազգային ազատագրական կռվի առաջին գոռեմարան է։

Ռուս զորքի հաղթությամբ Հայաստանը վառք է դնում կյանքի մի նոր շրջան։ Ռուս պետականությունը վեպի մեջ հանդես է գալիս իբրև Հայաստանի փրկիչը։

Արովյանի քաղաքական մտայնությունն այն ժամանակ, երբ չեր թափանցում ռուս պետականության աշխարհակալական ձգտումների մեջ։ Նա իր առաջ հարց չեր դնում, թե ինչու յի «Ռուսաստանը

տիրում Կովկասի լեռներին։ Աբովյանի ռուսական որիենտացիան, սակայն, իր շատ վորոշ պատմական հեռատեսությունն ուներ։

Այո, նա պատմական խորաթափանցությամբ եր նայում քաղաքական հարցերին։ Նա շատ լավ գիտեր, վոր մի լուսավորված ազգի, որինակ Ֆրանսիացիների համար, Ռուսաստանի ձեռքի տակ անցնելը այն նշանակությունը չեր ունենա, ինչ հայերի համար։

Հայաստանը քայքայված և ուժասպառ յեղած յերկիր եր։ Նրան պետք եր մի ուժեղ կռվան։ Վիրն եր լինելու այդ կռվանը, Պարսկաստանը, թե Ռուսաստանը։ Պարսկական տիրապետությունն իր ասիական ահավոր հետամնացությամբ վտանգել եր Հայաստանի ազգային ինքնությունը։ Աբովյանն ինքն էլ գիտեր, վոր մի ժողովուրդ, յեթե դժբախտություն և ունեցել իր յերկիրն ու ինքնուրույնությունը կորցնելու, այլևս ի վիճակի չի լինելու պահպանելու իր ազգային ինքնուրույնությունը, լեզուն, հոգևոր գանձերը։ Աբովյանը մի տեղ ասում է, վոր ամեն ինչ խորտակող, ուժեղ հեղաշրջումների հորձանքի մեջ հայերի համար դժվար և պաշտպան կանգնել իրենց ինքնուրույնությանը։ Բայց Ռուսաստանի մեջ նա տեսնում եր այն հզոր պետությունը, վորի թևերի տակ հայ ժողովուրդը մի պահ կարող և ուշքի գալ, շունչ քա-

ՎԱՅՐԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՄԵԾ ՀԱՅՔԵՆԱՅԻՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԸՍՏՐՈՒԹԵ

ԽՈՔՈՒ ԷՖԵՆԴԻ

ԹԻՖԼԻՍ

Ի Տպարանի Լեբսիսեանց Պոպոցի Հայոց
ընծայելոյ Գյանջեռանման Ազգայ Պոհորդաց
Ազգրատուն։

1858

Վերջ Հայաստանի-ի առաջին հրատարակութեան
ամփոփագրքերը

շել, հավաքել իրեն։ Ռուսաստանի կողմն անցնել՝ նշանակում է փրկել ազգը կորստից— ահա առաջին պայմանը։ Իսկ յերկրորդը՝ ժողովրդի բախտը կապել մի ժողովրդի հետ, վորի լեզուն, գրականությունը, կուլտուրան արդեն սկսել եյին աշխարհի հիացմունքի առարկան դառնալ։ Այդ և պատճառը, վոր Աբովյանը շատ մեծ նշանակություն եր տալիս ռուսաց լեզվին։ Դա կոգնի,—ասում եր նա,—կրթելու մեր միտքն ու զգացմունքը ռուս գրականության ստեղծագործությունների վրա, վերջապես, մտանենալ այդ ժողովրդի վոգուն։ Ռուսաց լեզուն սովորելով,— ասում է նա մի ուրիշ տեղ,—մենք կարող ենք միանալ ուրա մեծ ազգի հետ, վորի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ ռասարին, սեր և անձնվիրություն։

Ազգության գաղափարը վեպի քաղաքական մտայնության առանցքն եւ ժողովուրդը պետք է գա, հասնի ազգային ինքնաճանաչության։ Դրա համար պետք է այնպես անել, վոր ժողովուրդը կարենա ինքն իրեն ճանաչել... «մեր ազգը, վոր խեղճ ա մնացել, թրի, կրակի յեսիր, բոլորի պատճառն են ա, վոր մեզ ասող չի ըլում, թե մենք ով ենք, մեր հավատն ինչ ա, ինչի համար ենք յեկել աշխարք. քոռ գալիս ենք, քոռ գնում»։ Այստեղ գյուղացու բերանով խոսում է ինքն Աբո-

վյանը։ Դուրս հանել ժողովրդին հոգեկան և մտավոր խավարից, վորի մեջ ընկղմված նա խարխափում և ժողովուրդը պետք է կանգնի ազգային միությունն ամբի վրա, դառնա ազգ, համահավաք ժողովուրդ, ունենա իր ազգային հոգեբանությունը, ազգային հպարտանքը։ Դրա համար նա պետք է լավ իմանա իր պատմությունը, լավ ու խոր ըմբռնի, հասկանա այն դարերի ճամբան, վորի վրայով ինքը, այդ հինավուրց ժողովուրդը սահել, անցել և իրը կոխկրտված, վիրավոր ու դառնացած, ցիրուցան յեղած ու անկազմակերպ ժողովուրդ։ Իր «Վերքով» Աբովյանը հայի ձեռն է տալիս նրա շատ մոռ անցյալի պատմությունը, վոր նա իմանա յեղածը, տեսնի «հայոց ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմխիթար պատկերները»։

Բայց «Վերքի» քաղաքական մտայնությունն այս կետի վրա չի հանդչում։ Աբովյանն այն մտքին է, վոր այդ բոլորը վերջին հաշվով ծառայելու յեն մի գաղափարի, վորը դարձը անընդհատ կազմել է ինչպես ուրիշ ճնշված ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի յերազանքը։ Վիրն է այդ։ ունենալ ազատ և քաղաքականապես անկախ հայրենիք։ Դրա համար չպետք է ձեռքը ծոցը դրած կանգնել։ Եթե հարկավոր լինի՝ պետք է կռվի գուրս գալ, արյուն թափել։ Բայց այդ գա-

գափարը նա իր վեպի մեջ բացահայտ ձևով չի գրել, այլ ասել ու անցել է մի հեռավոր ակնարկի ձևով, որը հասկացողը հասկանա։

Ազգային ազատագրական շարժումը մեր իրականության մեջ մկրտվեց լուսավորչական շարժման գաղափարական ավազանում։ Աբովյանի յերկերում յեղած մութ ակնարկները՝ «արյուն թափելով» անկախ, ազատ հայրենիք ունենալու մասին, վկայում են այն նոր շրջափուլը, որը 40-ական թվականներից վոտք դրեց հայ ազգային ազատագրական շարժումը։ Ռուսական ցարիզմի ոգնությամբ կռիվ մղելով պարսից տերության դեմ, հայ ժողովուրդն այժմ պետք է յելներ «ռուսական հզոր արծվի» դեմ՝ պաշտպանելու իր ազգային իրավունքը։

Անժամանակ մահը խանգարեց Աբովյանի քաղաքական մտայնության վճիռանալուն։ Ցավ շատ բան, որը Աբովյանի ժամանակ դեռ պարզ ու ըմբռնելի չեր, հասկանալի յեղավ հետո, հայ վաթսունականների ժամանակ։ Աբովյանն իր ծոցում, գրեթե գաղտագողի կրեց հայ ժողովրդի ազատության գրոշը, իսկ հաջորդ սերունդը Նալբանդյանի ձեռով թաղուն պահված դրոշը հրապարակ քաշեց։

Աբովյանը «Վերքը» գրել ու պատրաստել էր դեռ 1840-ին։ Հեղինակն իր վեպը չտեսավ տպագրված։ «Ո՞վ գիտի, բալքի թե մի տատ-

վածաներ մարդ իր հոգու խաթեր տպել տա»,— հույս և հայտնում նա մի տեղ։ Այդպես էլ յեղավ։ Աբովյանի մահից հետո, 50-ական թվականներին «Վերքը» արտագրված ձեռքից-ձեռք անցավ։ «Վերքի» առաջին տարածողները յեղան նրա աշակերտները, վորոնց մոտ, գեռ 1838-ին մի քանի հատվածներ կարդացել եր։

«Վերքը» ձեռքից ձեռք անցնելով ընկավ Դորպատ։ Աբովյանը մի տեսակ ճանապարհ եր բացել գեպի Դորպատ, վոր 50-ական թվականների սկզբներին հայ գրողների ու գրծիչների զաղափարական մկրտության ավազանն եր զարձել։ Դոզոխյանը, Պատկանյանը և շատ ուրիշներ գիշերներ են լուսացրել «Վերքի» արտագրված որինակի վրա, իրենց արցունքով թրջել ձեռագրի եջերը։ Ներշընչված հայ զորպատականները հայրենասիրական յերգեր ու բանաստեղծություններ եյին գրում։ Մեկն այդ անհաշիվ ներշնչումներից յեղավ համբավավոր «Մայր Արաքսին»։

Վերջապես, 1858-ին, Փոնդոյանի ջանքերով, Թիֆլիսում լույս տեսավ «Վերք Հայաստանին»։ Վեպը մեծ հաջողություն ունեցավ։ Պերճ Պռոշյանը պատմում է այն տպավորությունը, վոր գործել է իր վրա Աբովյանի վեպը։ Այնքան է կլանվել Պռոշյանը, վոր նույն գիշերը մի անգամ կարդալուց հետո, յերկ-

բորդ անգամ է սկսել «Վերքիս» ազդեցության տակ նա սկսում է գրել իր անդրանիկ վեպը՝ «Սոս և Վարդիթերը»։ Միայն Պռոշյանին չի վոգեվորել «Վերքը»։ Վեպը մեծ ազդեցություն է ունեցել նաև Ղազարոս Ագայանի վրա։ Բարձր գնահատության է արժանացել «Վերքը» հյուսիսափայլականների՝ Ստ. Նազարյանի, Միք. Նալբանդյանի, արևմտահայ հրապարակախոս Ստեփան Վոսկանի և ուրիշների կողմից։ Ավելի ուշ, 80-ական և 900-ական թվականներին «Վերքիս» մասին շատ ջերմ ու դրական արտահայտվել են Ստ. Շահումյանը և Հովհաննես Թումանյանը։

Ի՞նչն էր, որ այդպես համայում էր վեպի ընթեցողներին։ Ամենից առաջ, իհարկե, այն, որ դա մեր առաջին ազգային վեպն էր։ Լավ է առել Նալբանդյանը, թե «այդ աշխատությունը մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը։ Հայկական գյուղը պա սիկ տերության ձեռին, ռուս-պարսկական պատերազմը, ռուսաց զորքերի մուտքը Ցերևան,— ահա այն պատմական դեպքերը, որ իրենց ճշմարիտ պատկերացումն են գտել վեպի մեջ։

Կառուցված լինելով ազգային ազատագրության գաղափարի վրա՝ վեպը ռոմանտիկական վոգի ունի։ Մարդուն բարձրացնող, միտքն ու հոգին ազնվացնող ռոմանտիզմն

և այդ, որ համակում է ընթերցողին և մինչև վերջը գերի պահում իր կախարդանքի մեջ։ Բայց դա վեպի շունչն է, որ վեպի մեջ ռեալիստական պատկերացումների կարելի չէ հանդիպել մինչև անգամ նատուրալիստական նկարագրերի։ Սանտիմենտալիզմ— նույնպես կարելի չէ գտնել։ Բայց այդ բոլոր անհարիրը միավորվում է յուրի հիմնական վոնի, ռոմանտիզմի։ Շիլլերյան ազնիվ, բարձր ռոմանտիզմի շուրջը։ Բայց այդ չի խանգարել, որ Աբովյանը հարազատ մնա իրականությանը, վերապատկերի մի ամբողջ աշխարհ՝ որին վիպագրի բանաստեղծական կորովը հավիտենական շունչ է տվել։ Աբովյանի ռեալիզմն անխառն չէ, բայց առող՝ է, թեև, հիպերբոլիկ է, բայց կենդանի, ինչպես ժողովրդի զրույցը, խոսքը։ Աբովյանը, որինակ, այնպես է պատկերագրում ծխամած խրճիթը, որ ընթերցողին մի պահ թվում է, թե ինքը ծխի հոտ է առնում։ Զմռան տեսարանը կարդալիս մարդ ակամա ցուրտ և սարսուռ է զգում։ Դեմքերը գծելիս էլ Աբովյանը շատ հաճախ ռեալիստական հնարների չի դիմում։ Տեր-Մարկոսը, գզիր Կոստանը, Մուռոն, տատուտերը,—այս բոլորը կենդանի մարդիկ են։ Մի փոքր այլ է Ադամին։ Դա հերոսական գեմք է, և, բնականաբար, նրա նկարագիրը ռեալիստական չէ ռոմանտիկան հակացողու-

թյամբ։ Աղասին քաջ է, առասպելական ուժի տեր, բայց զարմանալի ազնիվ ու բարի։ Գեղեցիկ է, խելք, ամեն բանի մեջ շնորհալի և ընդունակ, մարդասեր։ Մի խոսքով Աբովյանն իր հերոսին ներկայացրել է բոլոր բարեմասնություններով։ Աղասին դյուցազնական կերպար է։ Նա մի կողմով հանդիսանում է ժողովրդի ազնիվ ու լավ գծերի խտացումը, մյուս կողմով՝ շիլլերյան հերոսների որինակով՝ Աբովյանի գաղափարների ձայնափոխը։ Այդ Աղասու պատկերի կուռ ամբողջությունը յերկփեղկել է։ Գեղջկական պարզամտությունը չի խանգարում, որ նա լյուտերականության դիրքերից քննի յեկեղեցին, ծաղրի նրա ծիսակատարությունները։ Իր մենախոսությունների մեջ Աղասին պանթեիզմի հողի վրա մերժում է միջնադարյան ասկետիզմը, հանդերձյալ աշխարհին հակադրելով յերկրային կյանքի հրապույրը, վայելքը։ Նույն մտքերն Աբովյանն արտահայտել է նաև «Թուրքի աղջիկ» սրտառուչ պատմվածքի մեջ։

«Վերքը» հիմնապես կառուցված լինելով ռուս պարոկական պատերազմի ֆոնի վրա, ունի շատ վառոշ այուժետային գիծ։ Մի ուրիշ հեղինակ հարապատ կմնար դրան, բայց Աբովյանը փշրում է վեպի այդ սահմանները և իր հախուռն ընթացքի մեջ է առնում համ-

բին պատահածը։ Վեպը հեղեղված է խոնարհան և լիրիքական զեղուճներով։ Վեպի հիմնական շաղախը հուլգն է, հուզականությունը։ Լինում են պահեր, յերբ թվում է, թե հեղինակի զգացմունքների հեղեղի մեջ կորչում է սյուժեն, վիպական գործողությունը։ Ինքն Աբովյանն էլ է գիտակցում այդ։ «Լավ չի սկսած բանը թողալ ու եսպես քարոզ տալ, յես էլ գիտեմ, ամա սիրտս չի դիմանում, ինչ անեմ»,—խոստովանում է հեղինակը վեպի կիսին։ Աբովյանն ասել է, ինչ վոր մըտքով անցել է, ինչ վոր սիրտը զգացել է։ Մի դուցե դրանից յերկի վիպական կառուցվածքը մի փոքր տուժել է, բայց դրա փոխարեն նա «Վերքի» մեջ դրել է իր ժամանակի միտքն ու հոգին։ «Վերքը» հայ ժողովուրդն է, վոր Աբովյանի բերանով զարերին ու սերունդներին խոսում է, պատմում իր տրտունջքը, մտածումներն ու իմաստությունը։

* * *

Մյուս մեծ և նշանավոր գործը, վոր ստեղծել է Աբովյանը, դա «Նախաշավիղն» է։ «Վերք Հայաստանին» դարագլուխ կազմից հայ գրականության մեջ, իսկ «Նախաշավիղը» մի կատարյալ հեղաշրջում առաջ բերեց հայ մանկավարժական մտքի պատմության մեջ։ Ցերկու գործերի գաղափարական շաղախը դե-

մոկրատիզմն և, թե մեկը, թե մյուսն ախոյան կանգնեցին կղերական միջնադարյան մտայնության դեմ, առաջ քաշելով աշխարհիկ սկզբունքների պաշտպանությունը գրականության և մանկավարժության մեջ։ «Նախաշավիղը» հիմն ի վեր շարժեց մանկավարժական դոգմատիկ միտքը։ Բացի նրանից, որ «Նախաշավիղը» փոխարինելու էր ազգմոտին, կատեքիզանին, որոնք անգիր անելու համար հայ մանուկները գլուխ էին ջարդում, միաժամանակ դա յեվրոպական մանկավարժության գաղափարների պաշտպանությունն էր հայ իրականության մեջ։

«Նախաշավիղ» մեջ Աբովյանը հանդես է գալիս իբրև Ռուսոյի աշակերտ։ Նա պահանջում է ճանաչել մանկան հոգին, նրա միտքը չծանրաբեռնել ժամանակի խրթին գրվածքներով, որոնք, ինչպես Աբովյանն է ասում, «միանգամայն ոտար և անոռվոր են դեռահաս մանուկների սովորական լեզվին, հոգեկան կարողության և բնական հետաքրքրքրության։ Աբովյանը «Նախաշավղով» պահանջում է մի անգամ ընդմիշտ հրաժարվել «գրերի անունները տալու՝ այբ, բեն, գիմ դաստավանդման միջնադարյան յեղանակից։ Նա փոխարեն առաջ է քաշում հնչական մեթոդը, ա, բ, գ, այսինքն՝ տառերի բնական արտասանությունը։ Ցեվ, որ գլխավորն է,

«Վերքից» հետո «Նախաշավիղը» գրաբարի որոշ մեջ խրված ամենամեծ ուրը յեղավ։ «Գրաբարի խորհրդանշությունը,—ասում է Աբովյանը,—պատճառ է, որ յերեխաներին ուսումը սոսկալի պատիժ թվա, դպրոցը՝ տանջարան։ Գրաբարը «Նախաշավղիղ» մեջ Աբովյանը փոխարինում է վոչ թե արարատյան բարբառով, ինչպես «Վերքի» մեջ, այլ մաքուր գրական լեզվով։ «Վերքի» համեմատությամբ սա արդեն մի քայլ առաջ է։

Մի փոքր այլ յեղավ այս յերկու գրքերի՝ «Վերքի» և «Նախաշավղիղ» ճակատագիրը։ «Վերքը» գրվեց ու ՄՈՍԿՎԱ տպագրության կարում։ Հեղինակի աչքը բախտ չունեցավ տեսնելու նրա հրատարակությունը։ Այնինչ յերկար փորձություններից հետո Աբովյանին հաջողվեց «Նախաշավիղը» տպագրել։ Բայց այն, ինչ յեկավ այդ հրատարակության գլխին, թերևս ամենադաժանն է հեղինակի ապրած ձախորդությունների մեջ։

«Նախաշավիղը», ինչպես արդեն գիտենք, Աբովյանը գրել էր մասնավոր դպրոցի աշակերտների համար։ 1839-ին «Նախաշավիղը» պետք է լույս տեսներ պետական ծախսով։ Բայց հանկարծ, Աբովյանի բախտից, Անգլիկովկասի դպրոցների վերատեսուչ Հեսսեն Միլլերը, վոր կարգադրել էր գիրքը տպագրել, պաշտոնանկ յեղավ։ Այդ չեր կարող

չանդրադառնալ գրքի բախտի վրա։ Աբովյանը կորցրեց վոչ միայն իր լավագույն բարեկամներից մեկին, այլև «Նախաշավղիթ» իրավունքն ու հրատարակությունը. մի բան, վոր նրա համար ստեղծել էր ցարական գահի ներկայությամբ հանցավոր ճանաչված Հեսսեն Միլլերը։ Նույն տարին Աբովյանը «Նախաշավիղը» ուղարկում է Գիտությունների Ակադեմիա։ Այստեղ ևս անհաջողության է հանդիպում գիրքը։ Աբովյանը գիմում է, վոր գոնե տպագրվի իր գործը, բայց ազգային լուսավորության նախարարությունը գանգատվելով իր նյութական հնարավորությունների սղությունից, հրաժարվում է։ 1841-ին Աբովյանը «Նախաշավիղը» ներկայացնում է Անդրկովկասի գպրոցների վարչությանը՝ հայոց գպրոցներում այն իրրև լեզվի ուսուցման ձեռնարկ ընդունելու համար։ «Նախաշավղի» բախտը գտնվում էր Թիֆլիսի գիմնազիոնի մանկավարժական խորհրդի ձեռքին։ Այս անգամ էլ անհաջողություն։ Ձեռնարկը չի ճանաչվում բավարար և ոգտակար։ Մի շարք դիտողությունների հետ ձեռագիրը վերադարձնում են հեղինակին։ Յերկու տարի անց, թերությունները շտկած, Աբովյանը կրկին «Նախաշավիղը» ներկայացնում է քննության։ 1843-ի վերջերին Թիֆլիսի գիմնազիոնի մանկավարժական խորհուրդը նորից

կլինի։ Այս երեխայեմ։ Այրեխայն գեռ փոքր է
և տկար ժամանակս կզբաղոյ և մեծ մարդ
կդառնայ։ Ոչ երն և առաջ երեխայերն մեջն
շատ բան գիտե։ Այրեխայն շատ բան չէ՞
գիտի։ Այս շատ բան չգիտեմ. բայց ես լաւ
գիտեմ, որ քարի մարդին Աստուած հել կոչիլ
մարդ հել։

31 Աշխարհն մեծ ա և գեղեցիկ։ Ո՞վ նրան
ամբան գեղեցիկ ստեղծեց ո՞վ տայ երկրին
անձրև։ Ո՞վ տայ ծառոցն տերև և պտուղ։
Ցորեն և գաւառ։ Լերինքը և երկինքը ո՞վ այդ-
քան զարմանալի զարդարեց։ Այն փոքր հաս-
կին ո՞վ ա տալիս սերմն և ջրուն։ Լաւագոյն
սաղանան ծաղիկք այնքան գեղեցիկ գոյն և
անոյշ հոտ։ Ո՞վ ա ես հոյակապ աշխարքը
լուսաւորում և պահպանում։ Դու ամեն իմ։
Ես զարմանալի աշխարքը դու ստեղծեցիր և
աշխարքն է քոյ։ Ինձ ևս դու ստեղծեցիր
և ես ևս քո որդի և արարած եմ։ Որպէս
դու քարի ես և գթած. նոյնպէս և ես պար-
տիմ լինիլ քարի և գթածուոր քեզ նմանիմ։

32։ Այրը զարթնիմ։ պէտք փառք տամ
ձեզ։ որ նա ինձ այնպէս քաղցր քուն պարգ-

քննությանն է առնում «Նախաշավիղը»։ Հորհուրդն այս անգամ ձեռնարկը գտնում է պիտանի և ոգտակար, սակայն պահպանողականությանը կառչած մարդիկ առաջարկում են յին փոխել գրքի վոգին։ Ցերկրորդ քննությունից հետո՝ Աբովյանն այլևս չտանելով իր գլխին կարգված դատավորների քմահաճ վճիռները, պատահածը համարելով կյանքի մի դառն հեգնություն, փորձում է իր ծախքով գլուխ բերել «Նախաշավղիղ» հրատարակությունը։

Գիրքն սկսում է տպագրվել, բայց լույս աշխարհ չեկած՝ ռուսական վայրագ հետաքննության զոհ է դառնում։ Վրաստանի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը, լսելով, վոր «Նախաշավիղը» գրված է ռամկական, գռեհիկ ժողովրդական լեզվով, վորը, ինչպես թիֆլիսի մանկավարժները ասին, քերականական վորևե վորոշ կանոն չունի, կարգադրում է տպագրությունը դադարեցնել, հավաքել թերթերը և, ասում են, այրել տալ։ Հոգևորականությունը, պահպանողական մանկավարժությունը, չինովնիկական պաշտոնեությունը, մի խոսքով այն ժամանակվա պաշտոնական-քարացած միտքը արգելքի տակ դրին մի գիրք, վոր շատ տարիներ հետո հեղինակի փառքերից մեկը կազմեց։

* * *

1843-ին Աբովյանը տեղափոխվեց Ցերևան։ Դպրոցների վարչությունն այնքան էլ հաշտ աչքով չէր նայում նրան։ Ցերևան տեղափոխվելն էլ շատ վորոշ փորձ էր նրան հեռու պահելու այն մտավորական շրջաններից, վորոնց հետ շփվում էր Թիֆլիսում։ Այն, այլևս Աբովյանը վստահություն չէր ներշնչում։ Բարձրագույն իշխանությունն անկարող էր չնկատելուն տալ, վոր նա յեղած կարգ ու կանոնից դժգոհ, ինչպես կյանքում, այնպես էլ նամակներում, գանգատվում է մինիստրության վրա։ Մի նամակում Ֆրենին նա կասկած է հայտնում, վոր իր գրածները հայտնի յեն դարձել ամբողջ Թիֆլիսում։ Թիֆլիսում շատ լավ հայտնի յեր Աբովյանի բարեկամությունը Հեսսեն Միլլերի հետ։ Վերջապես, փոխարքային ներկայացված բնութագրի մեջ Աբովյանի մասին ասված էր, վոր նա ճանկարող և իրեն հանձնված գպրոցը բարձրացնել մինչև այն աստիճան, վոր նա որինակելի լինի Անդրկովկասյան յերկրում։ Մի խոսքով Ցերևան տեղափոխվելն աքսորի նման մի բան էր։ Բայց Աբովյանին մխիթարում էր այն միտքը, վոր այժմ նա վայր է դնելու պանդուխտի ճամբորդական ցուպը և գործելու յե իր հայրենիքում։

Ցերևանը, հարկավ, այն չէր, ինչ թիֆլիսը։ Դա մի խեղճ, փոքրիկ քաղաք էր, գավառական սովորական ճահիճ։ Աբովյանն ընկել էր մի գորշ և անբովանդակ աշխարհ։ Ցերևանի բարձր խավը, այսինքն՝ չինովնիկական պաշտոնեությունը — դատավորները, վոստիկանական աշխատողները, մտավորականությունը, ուսուցիչները, բժիշկները զոհ իրենց անձնական կյանքից, հեռու հասարակական բարձր շահագրգռություններից, իրենց համար մի տաքուկ միջավայր էին ստեղծել։ Թղթախաղը սիրելի զբաղմունք էր, հարբեցողությունը — սովորական յերևույթ, իսկ բամբասանքն ու ինտրիգը՝ միակ բանները, վոր կենդանության նշան կոչում մեռած աշխարհը։

Այս շրջապատի հետ Աբովյանը հաշտվել չէր կարող։ Նա ասար, խորթ մարդ էր։ Ծանոթանալով Ցերևանի դպրոցին՝ Աբովյանի առաջին հոգսը յեղավ ուսուցչական հասատությունն ապատել անպատրաստ, կրթական գործին միայն վնաս բերող ուսուցիչներից։ Ցավ դա, Աբովյանի համար միանգամայն անանկատելի ձևով, գժտության անդրանիկ հատիկը յեղավ, վոր ընկավ ուսուցչական հին կազմի և նոր կարգված տեսչի միջև։ Աբովյանը յերազում էր իր ձեռքի տակ ունենալ այնպիսի ուսուցիչներ, վոր գեթ մանկավար-

ժամանակ տարբերական պատրաստություն ունենային, և, բացի այդ, սրտանց զորձելին։ Նա դպրոցական վարչության ուղղած իր զեկուցագրերի մեջ աշխատում էր համոզել, վոր անփորձ, անպատրաստ ուսուցիչն աշակերտին հարկադրում է ամեն բան սովորել անդիր, մեքենայորեն, վոր նա չի ազդում աշակերտի մտքի վրա։ Բայց ով էր Աբովյանին լսողը, ով էր նրա ասածներին ուշադրություն դարձնողը։ Նրան չհաջողվեց ուսուցիչներից վորևե մեկին փոխարինել մի ուրիշ և նոր մարդով։ Բոլոր ուսուցիչներն էլ Ճացին իրենց պաշտոնում։ Եվ Աբովյանը, ուզելչուզելը, պետք է զլուխը կախ շարունակեր նրանց հետ աշխատել։ Այդպես էր բարձրագույն իշխանության կամքը։ Աբովյանը շատ լավ նկատում էր, վոր այդ բոլորն իր պաշտոնակիցների մեջ առաջ է բերում ամիսն զժգոհություններ և խռովություններ։ Նա այժմ պետք է լուռ դիմադրեր այն ցած բանաստեղծություններին, վոր զժգոհ ուսուցիչները կազմակերպում էին իր դեմ։

Նա լիզու չգտավ և տեղական իշխանության հետ։ Բլամատցկին, վոր Ցերևանի նահանգապետն էր, մինչև վերջը գժտված Ճացը նրա հետ։ Սիրիր քշվելու յերկյուղը, աքսորական լինելու սարսափելի հեռապատկերը հարկադրում էր նրան, ինչպես ինքն է ա-

սում, լռությամբ չափավորել զգացմունքը։ Բայց այդ նրան հեշտ չեր հաջողվում։ Հոգով և մտքով ազնիվ, բնությամբ տաքարյուն, անմիջական Աբովյանը շատ հաճախ կորցնում եր զգուշությունը, չափավոր լինելու տակտը, յերբեմն, նույնիսկ, հոգեկան հավասարակշռությունը։

Այն, միշտ չեր հաջողվում նրան անտարբեր ձևանալ, խուլ ու համր մնալ շրջապատի նկատմամբ։ Եթե նրա հոգին մի ազնիվ ցասումով յեփնում եր, ընդվզում շուրջը յեղած տգիտության դեմ։ Քաղաքի գինետներից նա զոռով դպրոց եր քարշ տալիս աշակերտներին, փողոցում յերևանցիներին բարձրաձայն հանդիմանում եր։ վոր իրենց յերեխաներին դպրոց չեն ուղարկում։ Իսկ մի անգամ ստիպված յեղավ նույնիսկ փայտ բարձրացնել աշակերտներից մեկի տգետ ծնողի վրա, վորը խոնարհ բարև եր տվել փողոցով անցնող վոստիկանին և միանգամայն անտարբեր մնացել իր նկատմամբ։ Դա մի նյարդային, ջղաձգական քայլ եր, վորով Աբովյանի ազնիվ ու անմիջական հոգին մատնում եր իր անհաշտությունը, գժտությունն այդ տգետ, ամենամանափակ շրջապատի հետ։ վորի մեջ մի աննշան, չնչին առտիճանավոր, բայց վոստիկան շատ ավելի յեր պատկառանք ծնում,

քան։ ասենք, մի Աբովյան, վոր ուսուցիչ եր։ մատաղ սերնդի դաստիարակ։

Աբովյանը փորձեց մխիթարություն գտնել դպրոցական գործի մեջ։ Մանուկների աշխարհը նրա տարերքն եր։ Նա իր վողջ յեռանդը գործ դրեց իր խնամքին հանձնված ուսումնարանն արդնակելի դարձնելու համար։ Եկեղեցական մանկավարժության առաջավոր սկզբունքների վրա դաստիարակված Աբովյանի միտքը ճախրում եր հեռուները, գծում կրթական գործի այնպիսի բարենորոգչական ծրագրեր, վորոնց նախանձել կարող եյին հայ մանկավարժները նաև հետո, նույնիսկ մի քանի տասնամյակ անց։ Այն ժամանակ, յերբ շարունակում եր իշխել միջնադարյան տիպի դպրոցը, վորն իր կրթական սխոլաստիկ յեղանակներով, կրոնական գոգմաններով ապանում եր մանկան մեջ ինքնուրույնությունը, սերը գիտի գիրքը, կյանքի ճանաչողությունը, բնությունը, Աբովյանն առաջինը յեղավ, վոր առաջ քաշեց Հայաստանի դպրոցները հիմն ի վեր փոխելու հանդուգն ծրագիրը։ Մի խոսքով նրա դպրոցական գործունեությունը Եկեղեցում և այլ գործունեության հետ կապված ծրագրերը, մտորումները հայ մանկավարժության պատմության լուսավոր եջերից են։

Ի՞նչ եր առաջարկում Աբովյանը։

ա) աշակերտի ձեռը տալ դասագրքեր. պարզ ժողովրդական աշխարհաբար լեզվով և այնպիսի նյութերով, որոնք կարող լինեն մանկան մեջ արթնացնել բարի և ազնիվ զգացումներ, բարձր մտքեր.

բ) դասատվությունը մեքենայական չպետք է լինի, այլ գիտակցական։ Աշակերտը պետք է վոչ թե սերտի, այլ հասկանա, ըմբռնի.

գ) մեծ տեղ տալ բնագիտական գործիքներին, գլոբուսին, քարտեզներին, նկարին, վորպեսզի մանուկն ուսածը զննի, դիտի, շոշափի.

դ) ուսումնական կյանքի անբաժան մասը պետք է կազմեն աշակերտական զբոսանքները, լողը, խաղերը.

ե) դպրոցում ունենալ մի առանձին ուսուցիչ յերկրագործության և պարտիզպանության գործնականապես անցնելու համար.

զ) տեղական լեզուների (հայերեն, աղբերբեջաներեն) գործնական նշանակությունից յելնելով նրանց հատկացնել այնքան ժամեր, վորքան ուսաց լեզվի համար.

է) վոտիկանության միջոցով պարտադրություն դնել հայերի վրա իրենց յերեխաներին դպրոց տալու 7-8 տարեկան հասակից և չհանել նրանց դպրոցից վոչ մի պատճառով, մինչև 14 տարեկան հասակը և, ի հարկե,

ը) ամեն տարի դպրոցի աշակերտներից

մի քանիսին ուղարկել առևտրական, տեխնիկական կամ գյուղատնտեսական դպրոցները, վորպեսզի դրանով ապահովվի աշակերտների ապագան և, դրանով իսկ, ժամանակին ամրապնդվի յերկրի արդյունաբերությունը. իսկ լավագույն աշակերտներին, անխբեր բոլոր դասակարգերից, ուղարկել բարձրագույն դպրոցներ։

Թվարկած կետերը, իհարկե, չեն ապառում Աբովյանի մանկավարժական բարենորոգչական ծրագիրը։ Նա իր մանկավարժական հայացքները լրությամբ արծարծել է «Պատմություն Տիգրանիհ անանվան վեպի մեջ, վորը Ռուսաստի «Եմիլիա յերկվորյակն է։ Ինչպես այդ յերկի, այնպես էլ ընդհանրապես նրա մանկավարժական հայացքների վրա իշխում են Ռուսոյի և Պեստալոցիի համոզումները։

* * *

Աբովյանն իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց կատարելապես զժտված իր շրջապատի հետ։ Մի անպատմելի խռովություն համակել էր նրա քնքուշ հոգին։ Ներսես Աշտարակցուն ուղղված հուշակավոր թղթի մեջ Աբովյանը գանգատվում է, վոր իր որերն ապարդյուն են անցնում, կարողությունն

որեց-որ ապաստան է, միայն գլանում, անենչանքները հանգչում։ Աբովյանը չի թագցնում, վոր ամուսնական կյանք մտնելով՝ շատ վաղուց հրաժարվել եր նրանից, վոր ինքը մի խորթ, ոտար մարդ և անփական ընտանիքում։

Իսկ ինչ վողբերգություն եր ապրում Աբովյանը։ Ի՞նչ անբուժելի վերք ուներ նրա սիրտը։ Դա հայրենիքի վիշտն եր, Հայաստանի վերքը, վորն ամոքելու համար պատրաստ եր, ինչպես ինքն է ասում, նույնիսկ խաչ բարձրանալու։

Աբովյանի հոգին լուռ մաշվում եր փոքրոկությունների մեջ։ Այլևս ռուս պետականությունը չեր ներշնչում այն հույսն ու հավատը, վոր ուներ նա տարիներ առաջ, յերբ գրիչը ձեռին, գլուխը թաղած թղթերի մեջ՝ հափշտակված գրում եր իր «Վերք Հայաստանին»։ Այլևս Աբովյանը չեր տեսնում հայերի համար քաղաքական ազատ ու անկախ կյանքի իրական ուղի։ Ավելին, նա պետք նկատեր, վոր ռուսական գահը նոր շղթաներ դրեց հայ ժողովրդի վոտքերին։ Եվ այս անգամ Աբովյանի խոյանքի սովոր հոգին ընկղմվեց խոր հուսախաբության մեջ, մի մեծ վիհ բանալով իր և իրականության միջև։ Կյանքի ամեն մի քայլն այժմ նրա առաջ խոր հիասթափության մի նոր դուռ եր բացում։ Աբովյանը յեվ-

Էն ոսկի ճամբի քարերը

Ցավոտ իմ քարե ոսկի ցավոտ մարտական,
Ցիրուցան լեռներում, մի դեզանոց հիշ,
Անդրադարձ ոսկեգույն մեկ քանիսի,
Իրենց ամբողջ, բուրմ, ոգի ու հավիտենի։
Ճամբուցի գլխին դառ խոցված կեցվ,
Անդրեա, մի, խորհրդավոր հոգի հավերժ,
Գրանիտ ու խոնարհ, գրով, քարով ու կրակ
Ապրած ոգի հելի, ապրած քանդակ։
Էնպես քանդել ինչպես խրիատներ,
Ու ճամբի մեջտեղ մեզ հետ կանգնել դեռ,
Ամբողջ մի գրվել, գրաղրված կենդանի,
Խոնարհված մարդու ցնցումի դեզանոց։
Քիչ է գրագրի ասում, ոչ մեկ բուրմ,
Քո հոգի ձանձրանում, քո սիրտ հանգում,
Ապրած կյանքն գրաղրի գալ մի լիսի
Ապրած բուրմերը մի կրակ սանդի։
Աշխարհի թեղանի ջրիկ թեղանի,
Ասում է սառած, Տ սառ ի քանի։
Նրանք ինչ ոչ էլ պրա գրաղ կեցվ,
Էն խիստ կիսանդ, ու ուղանդ քիչ ա։
Ցավ, էն հոգի քարի ճամբեն դուրս,
Ամ գրաղ ի մեկնի, քարով սանդ, ցանկ։

Մի եղ Ազատյանի ձեռագրերից.

բոպացի գիտնականների ու ճանապարհորդների հետ (Բոդենշտեդտ, Վագներ, Հակստհաուզեն, Աբիխ և ուրիշներ) շրջել էր յերկիրը, վկա դառել ժողովրդի աղքատության, նրանց մասավոր անասելի խեղճության, ընդհանուր տգիտության, ռուս պաշտոնյաների չարաշահումների։ Նա չէր կարող չնկատել, վոր ռուս կառավարությունը, ինչպես Բոդենշտեդտն էր ասում, «հետամուտ է միայն մի նպատակի՝ կամաղուրկ ստրուկներ դարձնել իր հպատակներին»։ Նա մի՞թե չէր տեսնում, վոր Ցերևանի նահանգապետը կաշառակեր, պաշտոններ առնող ու ծախող մի մարդ է, վորի անունն անգամ բավական էր ժողովրդին սարսափի մեջ գցելու համար։ Մի՞թե նա չէր տեսնում, վոր բարձրագույն իշխանությունը թշնամաբար է տրամադրված դեպի իր անձնավորությունը։ Մի՞թե նա այնքան պարզամիտ էր, վոր չհասկանար, թե ինչու իրեն Ցերևան տեղափոխեցին, թե ինչու իր ձեռնարկները (առևտրական տեսակետից կարևոր ներմուծ ապրանք, գանազան գյուղատնտեսական մեքենաներ գնել, Գերմանիայից ընագիտական գործիքներ ստանալ, ուսուցչական կազմը թարմացնել և այլն) արգելվում, խափանվում էին։ Չի՞ վոր հենց ինքը, Արովյանը, իր մի գրության մեջ բաց և անում Բլավատսկու թշնամության բոլոր խաղաթղթերը։ Չի՞ վոր

Թիֆլիս, դպրոցական վարչությանն ուղղած մի զեկուցագրի մեջ, նա դառնացած առում է, որ կառավարությունն իր անգործնական հրահանգներով խանգարում է դպրոցական գործի զարգացմանը, իսկ տեղական իշխանությունները չեն նպաստում դպրոցական գործին։ Մինչև Աբովյանը կարող էր մոռանալ, որ Ներսես կաթողիկոսի պատճառով իրեն յերեքտարյա կալանքի տակ առան, մինչև նա կարող էր չհիշել, որ կաթողիկոսը հետ կանգնեց իր աշակերտներին Գերմանիա՝ ուսման ուղարկելու ասած իր խոստումից։

Այն, խիստ հուսահատական էր նրա վիճակը։ Հայ-ենակիցները նրան չեյին հասկանում։ Եջմիածինը յերես էր դարձրել։ Պաշտոնակիցները գավեր եյին սարքում նրա դեմ։ Իշխանության աչքում Աբովյանը մի մուլ և կասկածելի դրությունում էր։

Աբովյանն ուզում էր հեռանալ Յերևանից, գնալ մի ուրիշ տեղ, Ռուսաստան, Գերմանիա, որ հանգիստ առնի հետապնդումներից։ Բայց խիղճը թույլ չէր տալիս։ Նա ուզում, կրթություն էր ստացել, յերդում կերել՝ ապրել ու մեռնել հայրենիքի համար։ Թողնել, հեռանալ, նշանակում էր լքել ժողովրդին։ Թողնել, հեռանալ, նշանակում էր փախուստի դիմել, զենքերը ծալել, կուրծքը դեմ տալ թշնամու սրին։ Աբովյանի մտքից յերբեք

չեյին հեռանում իր սերելի ընկերոջ, Սա. Նազարյանի հորդորները—Ասալ և գիմադրել։ Կգան,—ասում եր նա,—կգան յերախտագետ հետնորդները և զարմացած հայացքով կնայեն նրա վրա, վորպես հայրենիքի մաքուր սիրո գովելի որինակի։

Բայց վորքան էլ համառ լիներ Աբովյանը, վորքան էլ արիություն ունենար նրա հոգին, միևնույն է, նա զգում եր, վոր ինքը միայնակ է և անոգ։ Նա ապրում եր միայնակ մարդու խոր և սարսափելի վողբերգությունը։

Աբովյանի յեռանդն ու նվիրվածությունը շատերի համար կասկածի աղբյուր եր։ Ցեվ այդ չեր խուսափել նրա աչքից։ Իր մի նամակում նա խոստովանում է, վոր Սիբիրի անը շարունակ աչքի առաջ եր։ «Կարծում եյի ամեն ակաթ. թե Սիբիրն է իմ վերջը»,—գրում է Աբովյանը 1847-ին։

Կասկածների մեջ ընկած Աբովյանը կորցնում է իր հոգու հանգիստը։ Նա զառնում է մատաղկոտ, նյարդային, տառապում է անքնությունից։ Նա, նույնիսկ մի պահ վորոշում է թողնել այնքարհիկ կյանքը, նորից վերադառնալ Եչմիածին, վանքի կամարների տակ ազոթք մրմնջալ։ Տանջող հակասությունների մեջ ընկած, նա փախչում է մարդկանցից, մենակության մեջ հանգիստ փնտռում, ընկերացաց իր մաքերի ու հույզերի հեղեղին, վո-

ին, ինչպես ինքն և մի նամակում ասում, կարող է միայն գագաղը խեղդել։ Նա հուսահատ վիճակում է իր փայփայած հույսերի կործանումը։

***

1847-ին Աբովյանը Ցերևանը թողնելու հաստատ վճռում ընդունեց։ Մտադիր եր տեղափոխվել Թիֆլիս կամ Մոսկվա։

Աբովյանը 1848-ի սկզբներին Թիֆլիս է մեկնում տեսնվելու Ներսես կաթողիկոսի հետ և առնելու նրա համաձայնությունը Ներսիսյան դպրոցում պաշտոն ստանալու մասին։ Ներսեսը խոսք է տալիս։ Աբովյանը վերադառնում է Ցերևան, Փետրվարին մի նամակով կաթողիկոսը շտապեցնում է Աբովյանին։ Աբովյանն ուզում եր, վոր ինքն ազատ արձակվի և իր տեղը մի ուրիշը Ցերևանի ուսուցչարանի տնուչ կարգվի։ Մարտի 11-ին Աբովյանը գրություն է ստանում, վոր ինքն ազատված է և տեղը նշանակված է Տուրկեստանովը։

Մարտի 30-ին նոր տնուչն սկսում է ընդունել ուսուցչարանի գործերը։ Ինչպես մյուս որերը, այնպես էլ ապրիլի յերկուսին Տուրկեստանովը գալիս է դպրոց շարունակելու գործերի ընդունումը, բայց Աբովյանը չկա։ Սպասում է, սակայն զուր։ Հետաքրքրվում է

և իմանում, վոր լուսադեմին դուրս և գնացել և այլևս տուն չի դարձել։ Նոր տեսուչը հաջորդ որն արդեն անհանգստացած Աբովյանի անհայտացման մասին հայտնում է Ցերևանի գավառապետին։ Մի պահ բոլորը յենթադրում են, վոր Աբովյանի անհայտանալու պատճառը կարող և ծառայության հետ կապված վորևե հանգամանք, որինակ, դպրոցական գումարի վատնում յեղած լինել։ Մի գուցե և իրավունք ունեցին այդպես կարծելու, վորովհետև ապրիլի յերկուսին, այսինքն, անհայտացման որը, Աբովյանը պետք և Ֆուրկեատանովին հանձներ ուսումնարանի գրամական հաշիվները։ Զսպասելով Աբովյանի վերադարձին, ապրիլի վեցին հատուկ հանձնաժողովը բացում և գրամարկղը և քննում հաշիվները։ Ստուգումը պարզում և, վոր հաշիվները ճիշտ են, յենթադրությունը՝ սխալ։

Սկսվում են վորոնումները։ Ամեն մի անհայտ հետք վորոնողներին հույս և ներշնչում գտնելու անլուր կորածին։ Եմիլիան և ուրիշ շատերը յերկար ժամանակ կարծում եյին, վոր Աբովյանը կարող և վերադառնալ։ Եմիլիան, ամեն անգամ վոտնաձայն կամ դռան բաղխոց լսելիս, տեղից վեր կը թռչում, դառնում աղջկան—ասես հայրդ չլինի։ Մի ապրում հույս բոլոր տանեցիներին հավատ կը ներշնչում, վոր այս և՝ դռները բացվելու յեն

և նրանց մեջ յերևալու յն Աբովյանը։

Որերն անցնում էյին, իսկ Աբովյանը չը-կար։

Ժողովուրդը զանազան առասպելներ և հյուսում նրա անհայտացման շուրջը։ Զանազան և մեկը մյուսից տարբեր յենթադրություններ տեղիք և տալիս պատահած դեպքը։ Վոմանք ասում են, վոր իշխանությունը «սև կարետով» տարել և Սիբիր։ Ուրիշներն էլ ասում են, վոր մի յերևանցի թուրք, կառկածելով, վոր Աբովյանը սիրային կապերի մեջ և իր կնոջ հետ, գաղտնաբար սպանել և և թաղել իր բակում։ Մի քանիսն էլ այն կարծիքին էյին, թե սպանողը հետքը կորցնելու համար դիակը գետն և նետել։ Սկզբում միայն Բոդենշտեդտը, հետո, արդեն տարիներ անց, նաև Սա. Նազարյանն այն յենթադրությունն արին, վոր «Աբովյանը մի խավար բոպեյի մեջ մահու յե տվել յուր անձը», այսինքն՝ անձնասպան և յեղել։

Սրանք բոլորն էլ յենթադրություններ են։ Մինչև հիմա յել Աբովյանի անհայտացումը մնում և մի չլուծված առեղծված։ Թերևս այդպես էլ մնա, մինչև վոր մի անակնկալ վկայություն չկա ցրելու գաղտնիքը, խարդավորությունն ու մութը։ Բայց ինչպես էլ լուծվի հարցը, վարկածներից վոր մեկն էլ հաստատվի և ճշտվի, միևնույն և այժմյանից մի

քան պարզ է։ Այդ այն է, որ Աբովյանն իր ժամանակի գոհը յեղավ։ Ստանդի հողի վրա յե ոպանվել, թե ինքն է ձեռք բարձրացրել իր վրա, Միքիր են քշել, նրան, թե ինքն է փախել ու կորստի մատնել իրեն, միևնույն է, պարզե, որ բոլոր դեպքերում էլ ժանանակը, խավար ժամանակն սպանեց նրան։

Նա չկարողացավ դուրս պրծնել «մշուշից, կամայականության, լռելյան անզգայացման, անհետ կորստի, տառապանալից տանջանքների թագավորությունից»։

Այո, նա ընկավ անհավասար կռվի մեջ, նոր գրականության ճակատագրի համար մղած հանդուգն պատերազմի պահին՝ իբրև դաժան ժամանակների նահատակ։

Ամփոփենք։

Աբովյանի կյանքի տխուր տարեգրությունը հայ ժողովրդի դարավոր տառապանքի խտացումն է մի անհատի մեջ, մի հանճարեղ մարդու, վոր ընկավ խավար ժամանակների նենգ դաշույնը բաղնիվ ու մեծ սրտի մեջ։

Հիրավի, վորքան ընդհանուր ու նման բան կա հայ ժողովրդի և նրա դավակի ճակատագրերի մեջ։

Հայ ժողովուրդը մի խորին խորհուրդ հոգում, վերքոտ սրտի թառանչը շուրթերին, անվախճան մաքառում է ապրել՝ վկայելու դարերի ու ժամանակների, լուսավոր մարդկության առաջ, վոր ինքն էլ մյուս ժողովուրդների պես խոսք ունի ասելու աշխարհին, վոր «հայի հանճարն էլ, ինչպես բանաստեղծն է ասում, միշտ ապառնել է վսեմ, ներսուրբ ու նուրբ վոլորտներում, թեև ինքը՝ հայը միշտ լոդացել է սրյան ծովի մեջ։

Աբովյանի կյանքն էլ մի մաքառում յերգավ, մաքառում խավարի ու տգիտության դեմ։ Նա պատեց իր կուրծքը ու սիրտը ջահ դարձած ժողովրդին առաջնորդեց դեպի ազատն

ու գեղեցիկը, լուսավորն ու բարձրը։ Ինքը վիրավոր և ուժասպառ, դժվար ճանապարհին, ընկավ արյունաքամ, բայց նրա մխացող սիրտը յերկար լուսավորեց նրանց ուղին, ովքեր գնացին նվաճելու փառքն այն ծով զանձերի, ինչ վոր դարերով յերկնել էր հայ ժողովրդի միտքն ու հոգին։

Մի քանի տարուց կմոռանա մեծ լուսավորչի անհայտացմանն հարյուրամյակը և մենք չգիտենք, թե վորտեղ են հանդչում նրա վոսկորները։ Մենք նույնիսկ չգիտենք, թե վորտեղ և ինչպես Աբովյանն ավանդեց իր վերջին շունչը, ունեցամ արդյոք իր հողաթումբն աշխարհում։ Բայց նա այն հազվագյուտ վոգիներից է, վորոնք փարատելով դարերի մշուշը՝ հավերժությանն են ձգտում։

Ազատագրված հայ ժողովուրդը մի նոր կյանքի յե վոգեկոչում նրան, վոր այն անիրավ ու իսավար դարում փորձեց իր սեփական արյունով սրբել ժողովրդի աչքից տառապանքի դարավոր արցունքը։ Այո, մի նոր կյանքի յենք կոչում նրան, վոր մի վառ հիշատակ է թողել ժողովրդի սրտում։

Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալքունյան
Սրբագրիչ՝ Ա. Արզումանյան
Գլավլիտի լիազոր՝ Ջ—1033. Հրատ.
№ 4923 Պատվեր 667. տիրաժ 2000.
Թուղթ 62×94. Տպագր.՝ 5 մամ. Մեկ
մամ. 23,300 նշան. Հանձնված է
արտադրության 29 հուլ. 1939 թ.
Ստորագրված է տպագրության հա-
մար 25 դեկտ. 1939 թ. Գեռհրատի I
տպարան, Երևան, Լենինի 65

Գրքի 1940 թ.
6

[504]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

FL0042440

I
A 6416